

ՄԱՍԼՈՅ
ԱՐՁԱԿՈՒՐԴ

Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով եւ համաձայն Մամլոյ սենտիքայի որոշումին, «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ շաբաթ, 16 օգոստոս 2025-ին:
Մեր յաջորդ թիւը՝ երկուշաբթի, 18 օգոստոս 2025-ին:

ՄԱԿ. «ՍՈՒՐԻՈՅ ԾՈՎԷՁԵՐԵԱՅ
ՇՐՋԱՆԻՆ ՄԷՁ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐՈՒ
ԸՆԹԱՅՔԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՈճԻՐԻ
ՀԱՄԱԶՕՐ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ»



ՄԱԿ-ի Սուրիոյ հարցով հետաքննիչ յանձնախումբը իր հրապարակած գեղուցումին մէջ նշեց, թէ մարտին Սուրիոյ ծովեզերեայ շրջանին մէջ տեղի ունեցած բռնարարքները «ծրագրուած եւ լայնածաւալ» էին, եւ անոնց ընթացքին տեղի ունեցան ոստիկանական խռովումներ, «որոնք կրնան պատերազմական ոճիւր նկատուիլ»:

Հետաքննիչ յանձնախումբը հաղորդեց, որ ժամանակաւոր կառավարութեան ուժերու անդամներն ու կառավարութեան հետ կամ անոր կողքին գործող անհատները» կիրարկեցին «տարբեր վայրերու մէջ լայն տարածում գտած ծրագրուած գործելաճիւղ»:

ՄԱԿ-ի հետաքննիչ յանձնախումբը եզրակացուց, որ «գործուած են արարքներ, որոնք պատերազմական ոճիւրներ կրնան նկատուիլ», եւ կը ներառեն «սպանութիւն, չարաբար, մեղաւորներու նկատմամբ անմարդկային արարքներ, լայն տարողութեամբ թալան եւ տուներու իրկիզում»:

Յանձնախումբը միեւնոյն ժամանակ նշեց, որ «այդպիսի յարձակումներ գործելու կառավարական քաղաքականութեան կամ ծրագրի գոյութեան մասին որեւէ փաստ չէ գտած»:

Յանձնախումբը նաեւ նշեց, որ ոստիկանական խռովումները դարձած են սուրիական նախկին վարչակարգին համակիր զինեալներ:

ՎԵԼԱՅԱԹԻ. «ԻՐԱՆ ՄԻՇՏ
ՀԱՆԳԷՍ ԵԿԱԾ Է ԻՐ
ԴՐԱՅԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ»



Իրանեան լրատուամիջոցները մանրամասնութիւններ յայտնած են Իրանի գերագոյն հոգեւոր պետի միջազգային հարցերով խորհրդական Ալի Աքպար Վելայաթիի եւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեանի միջեւ հանդիպումէն:

Ըստ իրանեան լրատուամիջոցներուն, Կոստանեան հանդիպումի ժամանակ բացատրութիւններ եւ հաշուետուութիւն ներկայացուցած է շրջանային վերջին զարգացումներուն եւ Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած բանակցութիւններուն վերաբերեալ՝ ընդգծելով երկու երկիրներուն միջեւ պատմական կապերու եւ բարի դրացիական յարաբերութիւններու պահպանման անհրաժեշտութիւնը:

Ան նշած է. «Մենք խորապէս հաւատարիմ ենք Իրանի հետ բարեկամական յարաբերութիւններուն եւ բարձր կը գնահատենք այդ պատմական կապերը»:

Վելայաթի, ողջունելով համագործակցութեան ընդլայնումը, յայտարարած է. «Իրանի իսլամական հանրապետութիւնը մշտապէս հանդէս եկած է իր դրացիներուն միջեւ խաղաղութեան եւ կայուն անվտանգութեան օգտին եւ, առաւել քան միջնորդութեան մասին յայտարարուող որեւէ այլ երկիր, պնդած է Հայաստանի եւ Ազրայէճանի միջեւ հանգստութեան հաստատումը:

«Իրան առաջին երկիրն էր, որ հորիզոնային Միութեան փլուզումէ եւ շրջանի երկիրներու անկայացումէն ետք քայլերու ձեռնարկեց Հայաստանի եւ Ազրայէճանի միջեւ խաղաղութիւն հաստատելու համար, եւ արտաքին գործոց նախարարութեան իմ ղեկավարման շրջանին եւ այդ ուղղութեամբ բոլոր ջանքերը գործադրեցի»:

ԱՅՍՕՐ ԱԼԱՍՔԱՅԻ ՄԷՁ
ԹՐԱՄՓ-ՓՈՒԹԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Այսօր Միացեալ Նահանգներու Ալաքսա Նահանգի Էնքըրէճ քաղաքին մէջ տեղի կ'ունենայ Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփի եւ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինի վեհաժողովը:

Թրամփ յայտնեց. «Եթէ Ռուսիան ուրբաթ օր չհամաձայնի զինադադար հաստատելու, Միացեալ Նահանգներէն շատ լուրջ հետեւանքներ թող սպասէ»:

«Եթէ առաջին հանդիպումը լաւ անցնի, կ'ուզեմ, որ անմիջապէս երկրորդ հանդիպում մը ըլլայ Փութինի, Չելսեյքսի եւ իմ միջեւ, եթէ անոնք կ'ուզեն, որ ես այնտեղ ըլլամ», նշեց Սպիտակ տան ղեկավարը:

Ան նաեւ յայտարարեց, որ եթէ Փութինի հետ հանդիպումին չստանայ իր ուզած պատասխանները, երկրորդ հանդիպում պիտի չըլլայ:



Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին նշեց. «Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփի վարչակազմը մեծ ջանքեր կը թափէ Ուքրաինոյ մէջ մարտական գործողութիւնները դադրեցնելու համար»՝ նշելով. «Աշխատանք կը տանինք շրջանին մէջ խաղաղութեան հաստատման համար պայմանները պատրաստելու»:

Շար.ը՝ 8

ԱՐԱՂՉԻ ԵՒ ԽՈՎԱՅԵՒ ԹԵՀՐԱՆԻ ՄԷՁ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ

Իրանի արտաքին գործոց նախարար Ալապաս Արաղճի Թեհրանի մէջ բանակցութիւններ վարած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան Կովկասի հարցերով յատուկ ներկայացուցիչ Իկոր Խովալէւի հետ:

Անոնք քննարկած են շրջանի վերջին զարգացումները, հաստատած, որ շրջանային եւ միջազգային կարեւոր հարցերու շուրջ Մոսկուայի եւ Թեհրանի դիրքորոշումները կը համընկնին եւ ընդգծած խորհրդակցութիւններու եւ գործակցութեան շարունակման անհրաժեշտութիւնը:

Արաղճի յայտարարած է, որ Իրան հաւատարիմ է Հայաստանի եւ Ազրայէճանի միջեւ յարաբերութիւններու խաղաղ կարգաւորման, ներառեալ «3+3» ձեւաչափի ծիրին մէջ՝ Կովկաս-



եան շրջանին մէջ անվտանգութեան, կայունութեան եւ համագործակցութեան ամրապնդման համար:

Խովալէւ փոխանցած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի ողջոյնը եւ տեղեկացուցած Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան եւ կայունութեան ապահովման ուղղւած Ռուսիոյ դիւանագիտական ջանքերուն մասին:

ԴԱՐՁԵԱԼ ՔԵՍԱՊԸ ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ Է
ԱՆՆԱԽԱՏԵՍԵԼԻ ՀՐԳԵՀՈՎ



Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Cilicia TV դիմատետրեան էջը կը հաղորդէ, որ շուրջ ամիս մը առաջ մեծ իրդեհի վտանգին ենթակայ էր Զեսապը: Այդ օրերուն իրդեհը Զեսապի դռներուն մօտ էր. սակայն այս անգամ անգապէի իրդեհը մուտք գործած է Զեսապ: Էքիզօլուիքը, Տիւզաքաճն ու Եսքիրանը ուղղակի իրդեհի մէջ են: Մեծ թիւով հայ ընտանիքներ արդէն իսկ հեռացած են իրենց տուններէ: Պետեան սահմանափակ միջոցները կարող չեն զսպելու անհաւոր իրդեհին տարածումը: «Կը յուսանք, որ օտար երկիրներ անմիջապէս օգնութեան հասնին՝ հակակշիռի տակ առնելու իրդեհին առաւել ծաւալումը», կը նշէ դիմատետրեան էջը:

Արամ Ա. կաթողիկոս մնայուն կա-

պի մէջ է Զեսապի հոգեւոր տեսուչ Եսայի վրդ. Եօրտեքեանի եւ այլ պատասխանատուներու հետ: Յայտնենք, որ Աստուածածնայ տօնին առիթով Սուրիոյ զանազան շրջաններէն ուխտաւորներ հաւաքուած են Զեսապ՝ գլխաւորութեամբ Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Մակար արք. Աշգարեանի: Զեսապի հոգեւոր տեսուչ հայր սուրբին վկայութեամբ, ժողովուրդին տուները կը պայթին՝ կազի շիջերու եւ արտերուն մէջ գետեղուած ականքներուն պատճառով:

«Կոչ ուղղենք մեր զօրակցութիւնը յայտնելու քեսապահայութեան, ինչպէս նաեւ արդթելու, որ կարելի փութով իրդեհին առաջը առնուի», կը նշէ Cilicia TV:

ՎԱՆԱ. «ԹՐԱՄՓԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱՅԻ
ՄԷՁ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՐՈՒՄ Է»

Միացեալ Նահանգներու փոխնախագահ Ճեյ.Տի.Վանս շեշտեց, որ Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ իրեն փոխանցած է, թէ իր առաքելութիւնը Եւրոպայի մէջ խաղաղութեան վերականգնումն է: Վանս Անգլիոյ մէջ ռազմակայանի մը մէջ ամերիկացի զինուորներու առջեւ իր արտասանած խօսքին մէջ նշեց. «Քիչ առաջ անոր հետ խօսեցայ, եւ ամենայն պարզութեամբ ըսաւ, որ իբրեւ վարչակազմ մեր առաքելութիւնը պիտի դարձընենք Եւրոպայի մէջ անգամ մը եւս խաղաղութեան հաստատումը»:

ՔՈՇԹԱ «ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՂՐՊԷՅՃԱՆ
ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀՈՒՈՎՈՅԹԻՆ»



Եւրոպական Միութիւնը պատրաստ է աջակցելու Ուաշինկթընի մէջ Հայաստանի եւ Ազրայէճանի միջեւ ձեռք բերուած համաձայնագիրներու իրականացման հոլովոյթին: Այս մասին Ազրայէճանի Նախագահ Իլիլի հետ հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին ըսած է Եւրոպական խորհուրդի Նախագահ Անթոնիօ Զոլթա:

Ան ընդգծած է Ուաշինկթընի մէջ երեւանի եւ Պաքի միջեւ ձեռք բերուած համաձայնութիւններու կարեւորութիւնը շրջանին մէջ երկարատեւ խաղաղութիւն ու կայունութիւն ապահովելու առումով եւ յայտնած է Եւրոպական Միութեան պատրաստակամութիւնը աջակցելու անոնց իրականացման գործընթացին:

Ազրայէճանի պետական ԱՓԱ լրատու գործակալութեան համաձայն, Զոլթա ընդգծած է այդ արդիւններուն կարեւորութիւնը շրջանին մէջ երկարատեւ խաղաղութեան եւ կայունութեան ապահովման առումով:

Ալիլի իր կարգին անդրադարձած է Ազրայէճանի եւ Նախիջեանի միջեւ անխոչընդոտ փոխադրամիջոցային հաղորդակցութեան մասին համաձայնագիրի կարեւորութեան:

ՄԻԿՅԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ՉԵԿՈՒՅՈՒՄԸ ԿԸ ՆՇԷ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
ՄԻՇՏ ՉԷ,
ՈՐ ՅԱՐԳԱԾ Է ԿԱՄԱՅԱԿԱՆ
ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ»



Սահմանադրութիւնն ու օրէնքը կ'արգիլեն կամայական ձերբակալութիւնն ու կալանաւորումը եւ կ'ապահովեն ոեւէ անձի իրաւունքը՝ դատարանի մէջ վիճարկելու իր ձերբակալման կամ կալանաւորման օրինականութիւնը: Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը միշտ չէ, որ յարգած է այդ պահանջները: «Նիւուզ» կը հաղորդէ, որ այս մասին նշուած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան 2024 թուականի մարդու իրաւունքներու գեղուցումին մէջ:

«Ըստ մարդու իրաւունքներու պաշտպաններու, ոստիկանութիւնը երբեմն մարդիկ կը ձերբակալէր առանց պաշտօնական մեղադրանքներու՝ իբրեւ պատիժ ձեւ: Փաստաբանները կը նշէին, որ մարդոց կալանաւորելու դատարանի որոշումները անկանխատեսելի էին, որովհետեւ նմանատիպ հանգամանքներու մէջ մեղադրեալները կ'ենթարկուէին տարբեր սահմանափակումներու: Դեւերը նշած են, որ ոստիկանութիւնը երբեմն կը խուսափէր անհատներու պատշաճ դատավարութեան իրաւունքներէ՝ զանոնք դատարան կանչելով եւ կալանաւորելով՝ պաշտօնապէս ձերբակալելու փոխարէն, այն պատրուակով, որ անոնք գործուն վկաններ են, եւ ոչ թէ կասկածելիներ: Ատիկա ոստիկանութեան կ'արտօներ հարցաքննել անհատները առանց պաշտպանի օգնութեան:

Շար.ը՝ 8

ՍԱԼԱՄԱԻ ԴԵՏ ԴԱՆԴԻՊՈՒՄԵՆ ԵՏԶ

ՄԻՆԻՍՏՐ «ԿՈՒՁԵՆՔ, ՈՐ ԻՐԱՆ ԻՐՈՂԱՊԵՍ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԵ ԸԼԼԱՅ ԵՒ ՅԱՐԳԷ ԱՆՈՐ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ»



Նախկին վարչապետ Ֆուադ Միսկորա երեկ այցելեց վարչապետարան, ուր հանդիպում ունեցավ վարչապետ Նուրաջ Սալամի հետ:

Միսկորա Սալամի հետ իր հանդիպումն ետք յայտնեց. «Քննարկեցինք Լիբանանի եւ շրջանին մեջ տեղի ունեցող բոլոր հարցերը: Անկասկած, Լիբանան տակալին կը տառապի Իսրայելի առօրեայ յարձակումներէն, որոնք աւերման, քանդումի, ահաբեկման եւ սպանութեան կը յանգեցնեն»:

Ան դատապարտեց եւ մերժելի նկատեց երեկ իսրայելեան բանակի սպայակոյտի պետ Իալ Չամիրի՝ կարգ մը զինուորներու ընկերակցութեամբ Լիբանանի հետ սահմանին վրայ շրջագայութիւնը:

Անդրադառնալով Իրանի Ազգային անվտանգութեան գերագոյն խորհուրդի քարտուղար Ալի Լարիժանիի Լիբանան այցելութեան՝ նախկին վարչապետը նշեց. «Կ'ուզենք, որ Իրան իրողապէս Լիբանանի բարեկամը ըլլայ եւ անոր ներքին հարցերուն չմիջամտէ: Մինչ Լիբանան ծանրաբեռնուած է, Իրան կը շարունակէ զայն ծանրաբեռնել այնպիսի բաներով, որոնք չի կրնար տանիլ: Զետեաբար, յոյս ունինք, որ Իրանի Իսլամական Զանրապետութիւնը ամէն ինչ կ'ընէ՝ Լիբանանը հեռու պահելու այն բաներէն, զորս կը փորձէ անոր պարտադրել եւ զորս ան չի կրնար տանիլ»:

Շարք՝ էջ 8

ՈՒՆԻՍԻ ՕՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ԵՒ ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Հոգեկան գոհունակութեամբ այսու կու գանք մեր ժողովուրդի գաւակներուն յայտնելու, որ Ս. Աստուածածին վանքի ուխտի Ս. պատարագը պիտի մատուցուի շաբաթ, 16 օգոստոս 2025-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի համալիրին մէջ:

Ուխտի Ս. պատարագին պիտի նախագահէ, մատաղօրինէք կատարէ եւ հայրապետական իր պատգամը փոխանցէ՝

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԸ

Պիտի պատարագէ՝
ԳԵՐՇ. Տ. ՏԱԾԱՏ ԵՊՍ. ԱՇԸԳԵԱՆ

Դիւանապետ կաթողիկոսարանի

ԾԱՆՕԹ:

Փոխարարկառքեր տրամադրուած պիտի ըլլան ժամը 5:30-ին հետեւեալ վայրերէն.

- Անթիլիասի Մայրավանք
- Զաւքա (Թիքո Թիքո)
- Ս. Աստուածածին եկեղեցի
- Խալիլ Պատուի եւ Զաւքա (Օլիմպի)
- Սրբոց Վարդանանց եկեղեցի
- Ս. Ազնէս վարժարան
- Ազգային Ծերանոց
- Ս. Յովնանու Կարապետ եկեղեցի
- Ս. Երրորդութիւն մատուռ (Ֆանար)
- Ս. Ներսէ Շնորհալի մատուռ (Ռաուտա)
- Ս. Յակոբ եկեղեցի (Էշրեֆի)

ԿԻՐԱԿԻ, 17 ՕԳՈՍՏՈՍ 2025

Ս. Աստուածածնի վերափոխման տօնին առիթով, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ պիտի մատուցուի Ս. եւ անմահ պատարագ եւ կատարուի խաղողօրհնէք:

Պիտի պատարագէ ու քարոզէ՝
ԳԵՐՇ. Տ. ՍԵՍՐՈՂ ԱՐԸ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Առաջնորդ Արաքական Միացեալ
Էմիրութիւններու, Զաթարի
եւ շրջակայից հայոց թեմի

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2025 (ՅԻՇԱՍԱԿ ՄԵՌԵԼՈՅ)

Պիքֆայայի Ս. Աստուածածնի մատրան մէջ պիտի մատուցուի Ս. եւ անմահ պատարագ, որուն աւարտին տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան կարգ՝ ազգիս համօրէն ննջեցեցոց հոգիներուն ի հանգիստ:

ԴԻՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՉԷՅԻ. «ԲԱՆԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ 2 ՄԵՊՏԵՄԲԵՐԻ ՆԻՍՏԻՆ»

Կենսոլորտի նախարար Թամարա Չէյն «Ժառիտ» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց. «Լիբանանեան բանակի (զէնքի մենաշնորհման վերաբերեալ) ծրագիրը պիտի ներկայացուի 2 սեպտեմբերի նիստին, եւ ոչ ոք գիտէ այդ ծրագիրին բովանդակութիւնը»:

«Պէտք էր չաճապարել (զէնքի հարցին շուրջ) նախարարաց խորհուրդի երկու նիստեր գումարելու՝ առիթ ընծայելով կողմերուն միջեւ համաձայնութեան գոյացման», նշեց Չէյն:

«Ամերիկացի պատուիրակ Թամըս Պարրաքի փաստաթուղթի ընկարկումը անձնատուութեան համագործ է», յայտնեց նախարարը:

«Անուղղակի համաձայնութիւն կար յետաձգելու զէնքի մենաշնորհման օրակարգային կէտի վաւերացումը,



սակայն այդ համաձայնութիւնը ցարգուեցաւ», ըսաւ ան:

«Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիս մինչեւ վերջին պահ պիտի փորձէ Լիբանանի բախումի կամ լարուածութեան հասնիլը արգիլել», նշեց Չէյն:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Լիբանանի իրերօգնութեան սնտուկի վարչութիւնը հինգշաբթի, 14 օգոստոս 2025-ի կէսօրուան ժամը 12:00-ին հանդիպում ունեցաւ Լիբանանի հանրապետութեան նախագահի գոր. ժողգէ Գունի հետ:

62 սնտուկներ ներկայացնող վարչութիւնը կը գլխաւորէր սենտիքայի աւտենապետ պրն. Ղասսան Տաու: Վարչութեան մէջ իբրեւ դիւան ներկայ էր ԱՖՅԻԼ-ի տնօրէն պրն. Յակոբ Լատոյեան:

Իրերօգնութեան սնտուկներու ընդհանուր կացութիւնը ներկայացնելէ ետք նախագահը դրուատիքով հաստատեց իրերօգնութեան սնտուկներու դերակատարութեան համայնքներու մէջ առողջապահական մարզի մտահոգութիւնները թեթեւցնելու, ինչպէս նաեւ առողջապահութեան նախարարութեան հիւանդանոցային ծախսերու բեռը նուազեցնելու իմաստով:

Անիւրաժեշտ նկատեց, որ իրերօգնութեան սնտուկները շարունակեն իրենց աշխատանքները եւ առաւելագոյն չափով մեծ թիւով ընտանիքներ անդամագրուին սնտուկներուն մէջ, որպէսզի լիբանանեան ընկերութիւնը հաւասարակշռուած եւ արժանավայել կէսքը մը ունենայ:

Պրն. Ղասսան Տաու շնորհակալութիւն յայտնեց նախագահին ցուցաբերած հոգատարութեան եւ կարեւորութեան համար:

Ան յաջողութիւն մարդեց նախագահին՝ իր ժամանակաշրջանին խաղաղ եւ յաջող փուլ մը ունենալու համար:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

● ԱՐԲԻՐՆԵՐ «Նիտա Ուաթան» օրաթերթին. «Զանրապետութեան նախագահի եւ վարչապետի կեցուածքները նոյնութեամբ նշուած են պաշտօնական հաղորդագրութիւններուն մէջ, եւ ուղղակի ու կտրուկ կերպով փոխանցուեցան Իրանի Ազգային անվտանգութեան գերագոյն խորհուրդի քար-

ուական ցուցանիշներ պիտի բերէ, ինչ կը վերաբերի Լիբանանի մէջ քաղաքական ու ապահովական յառաջիկայ փուլի յստակացման:

● «ԱԽՊԱՐ» օրաթերթ. «Արդարադատութեան նախարար Ատել Նասսար աշխատանքի լծուած է Սուրիոյ արդարադատութեան նախարարութեան հետ սուրիացի շարք մը բանտարկեալներու յանձնման համար համաձայնութեան նախագիծի մշակման վրայ»:

● ԱՐԲԻՐՆԵՐ «Ախպար» օրաթերթին կը յայտնեն. «Սուրիական պետութեան լիբանանեան ապահովութիւնը խաթարած ոճիւրներ գործած իսլամական կալա-նաւորներէն ոմանք իրեն յանձնելու դիմումներուն անկարելի է ընդառաջել»:

● «ՇԱՐԸ ԱՌԻՍԱՐ» օրաթերթը կը հաղորդէ, որ լիբանանեան իշխանութիւններուն մօտ գոյութիւն ունի ուղղութեան մը յառաջիկայ ամիսներուն Լիբանան գտնուող որեւէ սուրիացի «տեղահանուած»-ի պիտակէն զերելու, որովհետեւ ստեղծահանուած նկատուելու բոլոր պատճառները վերացած են:

Լիբանանեան ապահովական աղբիւր մը «Շարք Աուսաթ»-ին նշած է, որ այդ պարագային Լիբանանի մէջ որեւէ սուրիացիի ներկայութիւնը ապօրինի պիտի նկատուի, եթէ իրեն լիբանանեան հողերու վրայ մնալ արտօնող կեցութեան արտօնագիր չունի:

● ԼԻԲԱՆԱՆԻ ելեկտրականութեան ընկերութիւն. «Ամրան շրջանին ելեկտրականութեան հոսանքի յաճախակի ընդհատումներուն պատճառը մեր կամքէն անկախ եղող թեքնիք գործուներն են»:

● ԼԻԲԱՆԱՆԻ օդերեւութաբանական ծառայութիւնը հաղորդեց, որ տաքի ալիքը այսօրուընէ սկսեալ պիտի սկսի աստիճանաբար նահանջել, եւ ջերմաստիճանը կ'իջնայ օր պիտի վերադառնայ իր եղանակային սովորական աստիճանին:

ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՀՈՎԱՆԱՌՈՐԵՅ ԵՒ ՀԱՆԴԻՍԱՎԱՐԵՅ «ԼԻԲԱՆԱՆԸ ԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐՈՒ ՊՐԻՄՄԱԿԷՆ» ՀԱՄԱԽՄԱՐՈՒՄԸ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար դոկտ. Նորա Պայրազտարեան հովանաւորեց եւ հանդիսավարեց «Ապատ» կազմակերպութեան «Ատիան» հաստատութեան հետ ու շարք մը լիբանանեան համալսարաններու հետ գործընկերութեամբ կազմակերպած «Լիբանանը իր երիտասարդներու պրիմակէն» գործօն քաղաքացիութեան պատկանելիութենէն ապագայի մշակում» խորագիրով ազգային երիտասարդական համախմբումը:

Պաշտօնական ներկայութեան կողքին համախմբումին ներկայ էին Լիբանանի տարբեր շրջաններէն եւ տարբեր մասնագիտութիւններու տէր երիտասարդ-երիտասարդուհիներ:

Երկօրեայ երկօրեայութեան ու մասնակցութեան ընթացքին քննարկուեցան ընկերային ու հոգեկան առողջութեան քաղաքականութիւնները եւ գոյացան զաղափարներ ու նախաձեռնութիւններ, որոնք հիմնուած են տեղական իրողութեան վրայ:

ՇԷՅԻՄ ՔԱՍԵՄ-ԼԱՐԻԺԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Հրգապալայի ընդհանուր քարտուղար Չէյն Նա-յիմ Զասնէ ընդունեց Իրանի Իսլամական Զանրապետութեան Ազգային անվտանգութեան գերագոյն խորհուրդի քարտուղար Ալի Լարիժանի եւ անոր ընկերակցող պատուիրակները՝ ներկայութեամբ Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մուծթապա Ամանիի: Այս մասին հաղորդեց Հրգապալայի տեղեկատուական գրասենակը:

Շէյն Զասնէ վերստին շնորհակալութիւն յայտնեց Իրանին՝ «Լիբանանին եւ անոր Դիմադրութեան խրայելեան թշնամիին դէմ շարունակուող աջակցութեան համար, ինչպէս նաեւ Լիբանանի միութեան, գերիշխանութեան եւ անկախութեան կողքին կանգնելուն համար»:

Հրգապալայի ընդհանուր քարտուղարը ընդգծեց «լիբանանցի եւ իրանցի ժողովուրդներուն միջեւ եղբայրական յարաբերութիւնները»:

ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՐԵՅՈՒՅ ՄԵՋ

Հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ
ԽԱՂՈՂԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Կիրակի, 17 օգոստոս 2025-ին

Կը պատարագէ եւ իր պատգամը կը փոխանցէ՝
Լիբանանի հայոց թեմի առաջնորդ

ԳԵՐՇ. Տ. ՇԱՀԷ ԱՐԲ. ՓԱՆՈՍԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք
մեր հաւատացեալ ժողովուրդը:

Սկիզբ պատարագի՝ ժամը 9:30-ին:

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՐԵՅՈՒՅ
ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹՐԱՄՓ-ՓՈՒԹԻՆ ՕԳՊԱՐԻԿԸ...

... Թռիչք պիտի առնե՞, թե՞ պիտի պայթի:

Ստալինը ասաց իր ժամանակը և առաջ, եւ յետ բազում վերի-վայրումներու ու տաք-պաղ ջուրերու մէջ նաւարկումներու՝ պաշտօնապէս յայտարարուեցաւ, որ նախագահներ Տա-նըլտ Թրամփ եւ Վլադիմիր Փութին համաձայնած են հա-նդիպում ունենալու, շուտով նաեւ յստակացաւ վայրը՝ Վլասթայի (Ռուսիայէն մօտա-տրապէս մէկուկէս դար առաջ գնուած հող) ամերիկեան զին-ւորական մէկ խարխիսին մէջ:

Եւ յանկարծ... շատ բան զըլ-խիվայր շրջեցաւ: Ռուսիոյ ուղղ-ւած Թրամփի սպառնալիքնե-րը սառնարան դրուեցան, քաղաքական մարդիկ եւ մամլոյ մէկնաբաններ հազար ու մէկ երգ հիւսեցին (եւ կը շարունակեն հիւսել) նախատեսուած «պատ-մական հանդիպում»-ին մասին, կապելով այն խառ-նիճադանն ու վերիվայրումները, որոնք կը ստեղծու-ին միջազգային սակարաններուն մէջ, ասոր-անոր դէմ ներածումի տուրքերը բարձրացնելու Թրամփի հրամանագիրներուն զուգահեռ: Ստեղծուած մըթ-նո-լորտին մէջ աշխարհը շունչը բռնած է՝ սպասելով, որ խաղաղութեան աղանիկն դուրս բերուի փուռէն, փե-տուրներով զարդարուի եւ թռիչք առնէ արիւնալի տազնապներու դաշտերուն վերէ, առանց վախա-լու, որ որսորդներ գինք նետահար (նոր աշխարհին մէջ հրթիռահարումը աւելի սովորական է) ընեն եւ փուռ վերադարձնեն: Այլ խօսքով, քարոզական ար-շաւտերն ու մեկնաբանութիւնները ստեղծած են վի-ճակ, որ կը նմանի օդապարիկ մը թռիչքի պատրաս-տելու գործին: Անմիջապէս հարց կը ծագի, թէ օդա-պարիկին ներարկուած տաք օդը արդեօք պէտք եղածէն աւելի՞ պիտի ըլլայ ու թռիչքի պահուն իսկ պայթեցնե՞ գունդը, թէ չափաւորականութիւնը ի վեր-ջոյ պիտի ըսէ վերջին խօսքը: Ըստ կարգ մը դէտերու, հանդիպումին տեւողութիւնն իսկ ցուցանիշ մը պիտի ըլլայ, անկախ անոր պատրաստութեան համար տրամադրուած ժամանակէն:



Եթէ ցարդ եղածին ու չեղածին ընդհանուր պատ-կերը աչքի առջեւ ունենանք, մասնաւոր եթէ չանտե-սենք, չմոռնանք Թրամփի յարափոփոխ եւ մանկա-միտ ուսուցումները՝ շատ մեծ յոյսերով չենք կրնար դիտել 15 օգոստոսի հանդիպումը: Կան մարդիկ, որոնք հրաշքներու կը հաւատան եւ կը յիշեցնեն, որ Ռեյքնի եւ Գորբաչովի օրերուն ալ, տեղ մը անկարե-լին դարձաւ կարելի:

Բայց ո՞վ է՞ ուզեր, որ երկու նախագահները իրա-րու հետ լեզու գտնեն եւ խաղաղութեան աղանիկն ի վերջոյ կատարէ սպասուած թռիչքը:

Նախատեսութիւններու եւ մէկնաբանութիւններու ամենէն հպանցիկ մէկտեղումն իսկ անկարելի ճիգ պիտի ըլլայ, որովհետեւ, ինչպէս ծանօթ է, աշխարհի չորս ծագերէն, եւ իւրաքանչիւր երկրէ՝ իր հաշիւնե-րուն հիմամբ, լուրերն ու նախատեսութիւնները մըր-ցումի ելած են իրարու հետ, կը նմանակեն Ողիմ-պիական մրցումները, որ կան բազմաթիւ մարզածե-ւեր, մարդ չի կրնար բոլոր մրցումներուն հետեւի կա-տարուած պահուն (պատկերասփիւռն ու արդի ար-հեստագիտութեան այլ բարիքներ մասամբ կը դար-մանեն պարտադիր թերացումները): Բայց կ'արժէ, որ կանգ առնենք քանի մը յայտարարուած ու չյայ-տարարուած դաշտերու վրայ՝ տեսնելու, թէ 15 օգոս-տոսի հանդիպումին օդապարիկը պիտի թռչի՞, պի-տի պայթի՞, թե՞ պիտի մնայ... սին օդի սահմանե-րուն մէջ:

Նախ նշենք, որ երբ երկու գերպետութիւններու նախագահները նման հանդիպումի կ'երթան, կաս-կած պէտք չէ ունենալ, որ անիկա բաւական լաւ նա-խապատրաստուած կ'ըլլայ (Թրամփ-Փաշինեան-Ալիեւ հանդիպումն ալ, ակբաղդատելի իր տարողու-թեամբ եւ տարածքով, անպայման որ պատրաստը-ւած էր երկար ժամանակի վրայ, հոգ չէ թէ ԶԴ-ական-



ները «ամէկուտութիւն» խաղացած էին եւ, ըստ սովո-րութեան՝ զայն գաղտնի պահեցին մինչեւ վերջին պահը): Նման գերաստիճան (ենթադրաբար) օրա-կարգի վրայ կ'ունենայ ո՛չ միայն երկու երկիրները, այլ նաեւ ամբողջ աշխարհը յուզող՝ հրատապ հար-ցեր, որոնք այս կամ այն չափով կախեալ են իրենց (այսինքն՝ իրենց ետին կանգնողներու) մատներու շարժումներէն, ջնջելու համար... շահադիտական-շահակցական քմայքներէն: Այսուամենայնիւ, թըմբակահարուող զինաւոր տազնապը Ուքրանիան է, այդ առանցքին շուրջ կը թաւալին ամերիկեան, եւրո-պական եւ այլ հետաքրքրութիւնները: Սա չի նշանա-կեր, որ, կրկնեցե՛ք, այլ տազնապներ բոլորովին պիտի անտեսուին: Կարելի չէ անտեսել մանաւանդ այն աղաղակող իրականութիւնը, որ Թրամփ ամէն բանէ առաջ իր շահերուն դիտանկիւնէն, մասնաւորաբար՝ Նոպլեան մրցանակի մը հասնելու մարմաքէն մղո-ւած, պիտի խոսի սեղան: Փութին ցարդ նման ախոր-ժակներ չէ ցուցաբերած...

Այս մօտեցումով՝ մեր ակնարկն ալ պիտի ընդգրկէ Ուքրանիայէն աւելի լայն պատկեր մը (անկարելի է ամբողջականը ներկայացնել):

Ա. ՌԵԲԵԼԻԱՆ. Մեծագոյն հարցումը կը պարտադ-րէ ինքզինք. Թրամփ ի վերջոյ պիտի յաջողի՞ կասեցը-նել աւելի քան երեք ու կէս տարի առաջ պայթած պա-տերազմը (տազնապին մեկնարկը անկէ տարիներէ առաջ էր): Սպիտակ տուն վերադարձի օրերուն, ան յիշորտաւորով յայտարարած էր, որ պատերազմը պիտի կասեցնէր 24 ժամէն, բայց ռազմական գործո-ղութիւնները կը շարունակուին այն պահուն, երբ կ'արձանագրեց այս տողերը. «Զուտ, կ'ըսուի, նոր յառաջխաղացք կ'արձանագրեն, ուքրանացիներուն հակադարձակումներ չեն դադրած, զոհերու ու քան-դումներու հաշուեցոյցը կը ծանրանայ: Համայնա-պատկերը մօտաւորապէս կարելի է ամփոփել հե-տեւեալով. Թրամփ եւ Փութին յայտնապէս կ'աշխա-տին երկուքով դասաւորումներու հասնիլ, դուրս ձգե-լով Ուքրանիան՝ ալ, Եւրոպան՝ ալ, այլ եղիմակաւոր կողմեր ալ (օրինակի համար՝ ՄԱԿ-ի կամ միջազգա-յին այլ միաւորներու ներկայացուցիչներ, ալ ի՞նչ խօսք՝ միւս գերութիւն ու դրացիներուն մասին): Չե-լենսքիի՝ «Առանց Ուքրանիոյ մասնակցութեան» որեւէ տնօրինում չի կրնար ըլլալ» պահանջը արժէք չի ներ-կայացներ մեծ բանակցողներուն: Մէկ կողմէ՝ Թրամփ արդէն մեծ չափով կշտացուցած է իր ախոր-ժակները, ծեռք բերած՝ Ուքրանիոյ բնական հարըս-տութիւններու շահարկման մենաշնորհը (Եւրոպան ինչպիսի՞ նախանձով կը դիտէ այդ իրագործումը եւ կը մտածէ, թէ այդ ինչպե՞ս եղաւ, որ հարկադրուած է ա՛յդքան ծանր տուրք վճարելու ամերիկացի... դաշ-նակիցին), միւս կողմէ՝ Փութին յայտնապէս ապահո-ված է Ուքրանիայէն իր գրաւած հողամասերուն վերջնական տիրութեան իրաւունքը. Թրամփի՝ «պէտք է հոգեր փոխանակեն» ակնարկութիւնը շատ անորոշ է, ռուսական կողմը պատրաստակամութիւն կը ցուցաբերէ շարայային նահանջի:

Եւրոպացիք՝ Թրամփի «մենատիրական» եւ ինք-նազուխ քայլերէն զայրացած, բոլորուած են Չէլենս-քիի շուրջ եւ կը քաջալերեն անոր՝ «որեւէ հողային գիշում պիտի չընենք»-ի կեցուածքը, կը մրցակցին զայն զինելու: Իրապաշտ դէտերու կարծիքով, Չե-լենսքիի «հաւը եփած է», որոշումներ պիտի տրուին՝ անտեսելով անոր պահանջները, յաջորդ հանգրուա-նին կրնան ձեւակայն մասնակցութիւն մը ապահովել երկու: Թրամփ այլապէս ալ իր կամքը պարտադրած է խրտուիլակի վերածուած եւրոպացիներուն: Կը յի-շէ՞ք, ՕԹԱՆ-ի դաշնակիցներուն պարտադրեց բարձ-րահանջեց, որ ամերիկեան գէլք գնեն ու Ուքրանիոյ նւիրեն (այսինքն՝ նախ եւ առաջ շահ, յետոյ... բայց ինչո՞ր շարունակել Ուքրանիոյ սպառազինումը, եթէ պատերազմի դադրեցման իսկական կամք կայ): Եւ եւրոպացիք չեն կրնար դէմ կանգնիլ նման պահան-ջին, որովհետեւ իրենց քիթը, կոկորդին ու շատ մը այլ զանազան գործարանները դրած են Թրամփի (ու զայն հովանավորողներու) ձեռքերուն մէջ: Այս դի-տանկիւնէն, ո՛չ Թրամփի եւ ոչ ալ Փութինի հաշիւնե-րուն համապատասխան պիտի ըլլայ օդապարիկը պայթեցնելը: Յոս կայ նաեւ իր կարելոր գործն մը. կարծեք թէ առաջմ մոռցուած են այն դրոպապատ-ճանները, որոնք պայթեցուցին Ուքրանիոյ պատե-րազմը (եւ առաջին հերթին՝ ՕԹԱՆ-ին Ուքրանիոյ ան-դամակցութեան օրակարգը, որմէ կամացո՛ւկ մը ետ-դարձ ըրաւ Ուաշինկթըն, ձեւով մը իր նախափոր-թիւնները պարտադրելով Եւրոպայի դաշնակիցնե-րուն): (Մեր Սիւնիքին վաճառքէն առաջ, Ուքրանիան գործնապէս ծախուած էր...)

Բ. ՄԻՋԻՆ ԱՐԵՒԷԼ. Վլասթայի գերաստիճանի նախօրեակին, Իրանէն մինչեւ Իսրայէլ, Սուրիա ու Լիբանան (հասնիքը նաեւ Ծոցի շրջանը) շատ բան չի խօսուի խաղաղութեան հասնելու իմաստով: Իսրա-յէլ կը շարունակէ ջարդերը, որդեգրած է Կազան

Ս. ՍԱՅԵՐԵՆԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՈՅԵԱՆԷՆ ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ՝ ՉՄՍԱՌՈՒ ՑԱՒԱԳԻՆ ՏԻՐԱՄՕՐ ՎԵՐԱԲԵՐՈՂ

Դեպի սրբավայրեր եւ վանքեր՝ այցելութիւնը շատ կանուխ քրիստոնէա-կան սովորութիւն է՝ հաս-տատուած մեր Տիրոջ Յի-սուս Քրիստոսի աշակերտ-ներու ձեռամբ: Այն մեծա-րանքի եւ յարգանքի տուրք է մատուցուած այն սուրբին, որուն յիշատա-կին կառուցուած է տուեալ ուխտավայրը: Հայրենա-զուրկ հայը սփիւռքի տա-րածքին եւս կառուցեց վանքեր, եկեղեցիներ, մա-տուռներ եւ սրբավայրեր, որոնք նոյնպէս դարձան ուխտավայրեր, ուր աշխարհացոյցի հայերը կը համախմբուին առնուազն տարին մէկ անգամ:

Այս ուխտավայրերէն մէկն է Լեռնալիբանանի Չմմառու վանական համալիրի մայր եկեղեցին՝ Փոխման Սուրբ Կուսին, կառուցուած 1771-ին, կից Չմմառու Ցա-ւագին Տիրամօր մատուռը, կառուցուած 1940-ին, որուն հիմնադրութեան 85-ամ-եայ յոբելեանը կը նշենք մեծ շուքով, եւ որուն խորանին տեղադրուած՝ Չմմառու Ցաւագին Տիրամօր կտաւը, Եւրոպական վերածնունդի գեղարուեստի զուլիս գոր-ծոցներէն մէկը կը համարուի:

Իւրաքանչիւր տարուան մայիս ամսուան վերջին կիրակին եւ օգոստոսի Վե-րափոխման տօնին, տոյն ուխտատեղիները իրենց ասպնջական թելերը բանալով կը հիւրընկալեն գաղութիս եւ գաղութս այցելած բոլոր հաւատացեալ հայորդիներ-ը, անոնց փոխանցելով քրիստոնէական հաւատքի ջերմութիւնն ու հայրենի բնաշխարհի լեռները յիշեցնող բնութեան քաղցրութիւնը:

Չմմառու պատրիարքական կղերի միաբաններու մօտ՝ Տիրամօր նկատմամբ իւրայատուկ սերն ու անկաճանքը դրոշմուած է հիմնադիր հայրապետ՝ Աբրահամ Ա. Արծիւեանի օրօք եւ այդ գեղուն զգացումները փոխանցուած են հայրապետե-հայրապետ, որոնք, մայրավանքէն հեռու գտնուելով հանդերձ, եղած են ջերմ երկրպագուները Չմմառու Ցաւագին Տիրամօր:

Սոյն խօսքերուն լաւագոյն ապացոյցը՝ Սուրբ Իգնատիոս Մալոյեանի յղած նա-մակն է օրուան մեծաւորին:

Ստորեւ կը ներկայացնեք զայն, առանց յապաւումի՝

ԱՌԱՋՆՈՐԱԴՐԱՆ ԿԱԹՈՐԻԿԷ ՀԱՅՈՑ

Վերաւորիցի

10 մայիս 1910

Գերյարգելի Տեր վարդապետ,
Հոս կը ծրարեմ mandate մի 50 Ֆրան-

քի:


Այս գումարը Զեօսեան Գեր. Յովսէփ Վարդապետը դրկած է, նա կը խնդրէ եւ կը թախանձի, որ բարեհաճիք Ցաւագին Աստ-ւածամօր յարմար զարդ մի գնել տաք այդ գումարով:

Հաճեցեք ընդունիլ սիրոյ ողջոյն, ան-կեղծ համակրանացս հաւաստիօք Գեր-յարգելի Տերութեանդ:

Խ. Տ.
Ի. Վ. ՄԱՆՈՅԵԱՆ

mandate ուղղակի Ձեր անուանը դրկե-լեցաւ

Պէրյուրի բոսթայով
Հաճիք հոնտեղի Գեր.
Վարդապետաց ձեռքով
Գանձել տալ:



ՄԱՇՏՈՑ Թ. Վ. ՉԱՅԹԵՐԵԱՆ
Չմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան Պատրիարքական Փոխանորդ եւ Չմմառու Վանքի Մեծաւոր

ԱՍՏՈՒԾԱԾԻՆԸ՝ ՅՈՅՍԻ ԽԱՐԻՍԻՆ

Աստուածամօր հանդէպ մեր ժողո-վորդին տածած սերն ու անկաճանքը, զգացական ինքնաբոլիս արտայայտու-թիւններ ըլլալէ անդին, խոր հաւատքի ակունքէն բխած վառ ապրումներ են: Աստուածամայրը իր ամբողջ եու-թեամբ, կենցաղով եւ ընդհանրապէս ողջ ներկայութեամբ, եղած է այն հան-գիստ ու վստահելի նեցուկը, որուն դի-մած են անհատներ եւ հաւաքականու-թիւններ՝ յուսադրուելով իր բարեխօ-տութենէն եւ ներշնչուելով ամբողջա-կան հաւատքի իր վառ օրինակէն:

Աստուածամայրը ամենայն գիտակ-ցութեամբ եւ հեզութեամբ ընդունեց այն, ինչ որ շատեր կը վախճային ըն-կալել. ատրիկա Աստուծոյ խորհուրդը ճշմարտապէս կեանքի վերածելու առաքելութեան կանչն էր: Այսպէս, անոր հնազանդօրէն արտասանած «Աստուծոյ աղախինն եմ» խօսքը ողջ մարդկութեան կողմէ կրկնուող վստա-հութեան եւ յոյսի արտայայտութիւն դարձաւ:

Հայ եկեղեցին Աստուածամօր երկ-րային կեանքի աւարտը խորհրդանշող նշումը, եւ ապա իր Միածին Որդիին ձեռամբ հրաշալիօրէն երկինք փոխադ-րուիլը՝ Վերափոխման տօնով կը նշէ, որ եկեղեցական տօնացոյցին համա-ծայն, կ'անուանուի Վերափոխումն Ս. Աստուածածին: Այս տօնը նաեւ կը կոչ-ւի «Փոխումն» եւ կամ «Նշումն»՝ շեշ-տելով այն իրականութիւնը, որ Աստ-ւածամայրը ոչ թէ մահացաւ, այլ նշեց եւ այս նշման ընթացքին իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի ձեռամբ եւ իրեշ-տակներու քաղցրահունչ օրհներգու-թեամբ երկինք վերափոխուեցաւ: Ահա այս պատկերն է, գոր կը տեսնենք Վե-րափոխման շարականին մէջ՝ մարմ-նաւորուած հետեւեալ բառերով.



«Լոյսն անքնին ծածկեալ ի ծոց Յօր, որ ծագեցաւ ի քէն մայր եւ կոյս, այսօր ինչեալ անմարմնական դատօք իրեղի-նացն» փոխադրեաց զքեզ լուսափայլ ամպովք ի լոյսն անստուեր»:

Ահաւա-սիկ շարականագիրը կը նկարագրէ, թէ հայրական ծոցին մէջ ծածկուած անքննելի լոյսը՝ մարդացեալ Բանը, ծագելով իր կոյս Սօբմէ, Տիրամօր նշման պատճառով երկիր իշնելով

ԳԵՌՈՐԳ ՎՐԻ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ
Շար.ը՝ էջ 6

ՄԻ՝ ՀԱՒԱՏԱՔ, ՈՐ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ, ՅԱՏԿԱՊԷՄ ՏԱՆԸՆԸ ԹՐԱՄՓԻ ՕՐՈՔ, ՁԵՒՈՎ ՄԸ ԿԸ ՓՐԿԵՆ ՁԵՁ ՁԵՐ ԳՐԱՅԻՆԵՐԷՆ

Հարաւային Կովկասի վերջին իրադարձութիւններէն, յատկապէս՝ Սպիտակ տան մէջ ստորագրուած համաձայնագրէն ետք, ամերիկացի եւ իրանցի վերլուծաբաններ ստորագրեցին շահեկան յօդուածներ, որոնցմէ երկուքը կը ներկայացնեն այս էջով:

Ն.

Ծեֆֆի Սաքս դիմած է Հարաւային Կովկասի երկիրներուն. Թրամփ ձեզ լրջագոյն անսխործութեան մէջ կը ներքաշէ եւ ամբողջովին չեմ աջակցիր Հարաւային Կովկասի մէջ Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու գործողութիւններուն, քանի որ այս շրջանը կը գտնուի բազմաթիւ մեծ պետութիւններու՝ Ռուսիոյ, Իրանի, Թուրքիոյ, Պարսից ծոցի երկիրներու միջեւ: Այս յայտարարութիւնը ըրած է ամերիկացի տնտեսագետ եւ պետական քաղաքականութեան ոլորտի վերլուծաբան Ծեֆֆի Սաքս:

«Հարաւային Կովկասիս պէտք է զգուշ վերաբերի: Այս Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի միջամտութիւն է, զունաւոր յեղափոխութիւններ կազմակերպելու փորձեր, Ռուսիոյ խոցելի կետին կրկին հասնելու փորձեր: Բան մը, որ բաւական ապակայունացնող իրավիճակ է: Այդ կը բխի Միացեալ Նահանգներէն եւ Եւրոպայէն, մասնաւորապէս՝ յատուկ ծառայութիւններէն:

Հարաւային Կովկասը Եւրոպա չէ: Հարաւային Կովկասը սշխարհագրական առումով Ասիա է: Եւրոպան պէտք է հեռանայ այնտեղէն: Խնդիրը այն չէ, որ Հարաւային Կովկասը պէտք է վատ յարաբերութիւններ ունենայ Եւրոպայի կամ ո՛րէն մէկուն հետ: Խնդիրը այն է, որ միջամտութիւնը՝ շատ դժուար շրջանի մէջ զգտնուող այս երեք անկայուն երկիրներու ներքին քաղաքականութեան, պէտք է իրականացուի ծայրայեղ զգուշ եւ ակնածանքով, որպէսզի անոնք Ուքրանիոյ չվերածուին:

Ուքրանիան կ'այրի Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի տիմարութեան պատճառով: Անոնք կը փորձեն այդ կրկնել Հարաւային Կովկասի մէջ: Հարցնող եթէ ըլլայ՝ ինչո՞ւ Ազրայէճան ներգրաւուած է Մերձաւոր Արեւելքի հակամարտութեան, աջակցելով Իսրայէլին եւ Իրանի վրայ անոր յարձակումներուն: Կը կատակէ՞ք: Անհաւատալի է: Այդ Կեդրոնական հետախուզական վարչութեան (ՍԻ.Այ.Էյ) գործն է, այն հանձարներուն, որոնք զանգուածային ճգնաժամ պիտի ստեղծեն: այս շրջանը ապակայունացնել:

Որեւէ տեղացի պէտք է ըսէ. «Մենք Հարաւային Կովկասի մէջ ենք: Մենք քանի մը պետութիւններու միջեւ ենք: Աւելի լաւ է միասին մնանք, քանի որ մեր ապագան տնտեսութեան եւ ապահովութեան առումով այստեղ է: Մենք պէտք չէ թշնամացնենք մեր դրացիները: Պէտք է գտնենք ճամբայ մը՝ դառնալու Ասիան եւ Եւրոպան կապող իրական միջին միջանցք եւ Ռուսիան ու Մերձաւոր Արեւելքը կապող հիւսիս-հարաւ միջանցք: Պէտք է հեռու մնանք մեծ տերութիւններու քաղաքականութենէն եւ, ի սէր Աստուծոյ, չխիջամտենք Իսրայէլի պատերազմներուն»:

Այս այն խաղն է, որ այս խիստ անկայուն շրջանին մէջ կը խաղան «Մոսատ»-ը, ՍԻ.Այ.Էյ-ը եւ Եւրոպան: Ես կը հիմնամ վրաստանի ներկայի կառավարութեամբ՝ իր ողջախիռութեան եւ գործապաշտութեան համար: Ես խորապէս թերահաւատ կը վերաբերիմ անոր, որ Ազրայէճանի եւ Հայաստանի իշխանութիւնները հիմա խաղեր կը խաղան, կամ որ՝ Միացեալ Նահանգներն ու Եւրոպան զանոնք կ'օգտագործեն աշխարհաքաղաքական նպատակներով, որոնք չեն համապատասխաներ Ազրայէճանի եւ Հայաստանի շահերուն:

Այդ ՍԻ.Այ.Էյ. -ի վաղեմի գործելաոճն է՝ միջամտելու Ռուսիոյ, իսկ հիմա նաեւ Իրանի գործերուն: Այդ ճիշդ հիմա տեղի կ'ունենայ: Շատ վտանգաւոր է:

Եւ ահա թէ ի՞նչ կ'ուզեմ ըսել Հարաւային Կովկասի բարեկամներուն. «Նայեցէ՛ք քարտէսին. Միացեալ Նահանգները բոլորովին չեն հետաքրքրուած Հարաւային Կովկասով: Անոնք խաղեր կը խաղան: Չզուշ եղէք:

Պրիւքսելը, որ ամբողջովին անգործունակ է եւ անկարող է որեւէ օգտակար բան ընելու, ցաւօք, ստիպուած է խոստովանիլ այդ, քանի որ ես ժամանակին Եւրոպական Միութեան



Ծեֆֆի Սաքս

Ռուսիոյ խոցելի կետն է: Ծիշող անոր համար ալ մենք պէտք է հրահրենք, ընդլայնենք մեր սահմանները, Ռուսիան մեր դէմ լարենք եւ մենք ի վիճակի ենք այդ ընել՝ անոր դրացի շրջանի միջոցով:

Անոնք կը փորձեն՝ ապակայունացնել Ռուսիան, խանգարել անոր տնտեսական բարգաւաճումը, խանգարել անոր բնականոն տընտեսական յարաբերութիւններու զարգացումը, ներառեալ՝ Հարաւային Կովկասի միջոցով:

Չինաստանի հետ լաւ յարաբերութիւնները Հարաւային Կովկասի տնտեսական ապագա-



յին համար աւելի կարեւոր են, քան՝ Միացեալ Նահանգներու հետ լաւ յարաբերութիւնները: Ինչո՞ւ: Որովհետեւ Չինաստանը Ասիոյ մեծագոյն տնտեսութիւնն է:

Հնդկաստանը եւս մեծ պետութիւն կը դառնայ եւ, ի դէպ, ապագային կարեւոր դեր կը խաղայ Հարաւային Կովկասի երկիրներուն մէջ: Միացեալ Նահանգները հովանաւորչական, դանդաղ զարգացող շուկայ են եւ բաւական հեռու կը գտնուին:

Հարաւային Կովկասի համար ռազմավարութիւնը այն է, որ այն կայուն, անվտանգ եւ հիւսիսն ու հարաւը եւ արեւելքն ու արեւմուտքը իրարու կապող խաղող միջանցք ըլլայ, ինչպէս նաեւ՝ բոլոր տեսակի ճարտարարեւտներու, յառաջադէմ արհեստագիտութիւններու, երկրագործութեան, զբօսաշրջութեան եւ արտադրութեան զարգացման համար հիմնալի վայր: Այդ ապագան է: Հարցը այն է, թէ ինչպէ՞ս հասնիլ այդ ապագային:

Այդ հիմնուած չէ ՕԹԱՆ-ի վրայ: Իսկ որպէսզի Հարաւային Կովկասի մէջ բոլորին համար պարզ ըլլայ. Հարաւային Կովկասի ոչ մէկ երկիր ՕԹԱՆ-ի անդամ կը դառնայ, որովհետեւ մինչեւ որ այդ տեղի ունենայ, Հարաւային Կովկասի մէջ պատերազմ կը բռնկի: Ռուսիան նման բան երբեք չոյլ չի տար:

Ռուսիան մտադիր է Հարաւային Կովկաս ներխուժել, եթէ Միացեալ Նահանգներ այդ չիրահրեն: Ինչո՞ւ: Որովհետեւ այս շրջանին մէջ բազմաթիւ կարեւոր շրջանային պետութիւններ կան: Թուրքիա չ'ուզեր ռուսական ներխուժումը: Իրանի չ'ուզեր ռուսական ներխուժումը:

Ռուսիա կը ցանկար, որ Հարաւային Կովկասը այս պետութիւններու միջեւ իւրայատուկ անվտանգութեան գոտի դառնար: Կայունութեան նկատմամբ խոր հետաքրքրութիւն կայ:

Չինաստան եւս խիստ հետաքրքրուած է Հարաւային Կովկասի կայունութեամբ, քանի որ այն Արեւելք-Արեւմուտք հաղորդակցութեան հիմնական միջանցք է, որ, ինչպէս բոլորը կը հասկնան, Չինաստանի գլխաւոր նպատակն է: Բոլորը Հարաւային Կովկասի մէջ կայունութիւն կը ցանկան՝ բացի, թերեւս, Պրիւքսելէն եւ Միացեալ Նահանգներէն:

«ԿՈՎԿԱՍԸ ԿՐՆԱՅ ԸԼԼԱԼ ՍԻՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԲԱՆԱԼԻՆ».

ԻՐԱՆՑԻ ՄԱՍՆԱԳԷՏ

Աւելի քան 10 օրուան ռազմական դիմակայութեան ընթացքին սիոնական վարչակարգի հետ Ազըրպէյճանի կառավարութեան չարամիտ ռազմական եւ պաշտպանական գործընկերութեան հսկայական ծաւալներու բացայայտումէն ետք, Իրան նոր հնարաւորութիւններ ստացած է սիոնական վարչակարգին հետ անխուսափելի ապագայ պատերազմին մէջ: Այս մասին գրած է միջազգային իրաւունքի իրանցի մասնագէտ Ամատ Զաքեմի:

«Հակառակ ազդեցիկ շրջանակներու ջանքերուն, որոնք կը փորձեն Ազրպէյճանի գործընկերութիւնը սիոնական վարչակարգին հետ յանգեցնել միայն Ազրպէյճանի վրայով սիոնական վարչակարգի անօդաչուներու եւ կործանիչներու թռիչքներուն, որուն մասին, հնարաւոր է, Պաքուի վարչակարգը տեղեակ չէ եւ փրկել Ալիեւներու ընտանիքը իրենց իսկ ստեղծած այս անդունդէն, իրանցիներու սպանութեան գործով Պաքուի գործընկերութեան ծաւալները չափազանց ընդարձակ են եւ չեն կրնար համեմատուիլ որեւէ այլ երկրի հետ, բացառութեամբ Միացեալ Նահանգներու:

Պաքուի եւ սիոնական վարչակարգի միջեւ այս թշնամական գործընկերութեան կարգ մը երեւոյթներ.

- Ցամաքային, օդային եւ ծովային (Կասպից ծով) տարածքներու լիակատար յանձնում «Յերմէս» եւ «Հարուի» կործանիչներու եւ անօդաչուներու թռիչքներու համար:

- Հիմնականին մէջ Կասպից ծովու ափերուն, Իրանի հետ սահմանամերձ շրջաններու մօտ գտնուող հինգէն աւելի խարխիսներու, ինչպէս նաեւ Չանգէլանի, Լենքորանի, Պաքուի եւ այլ վայրերու խարխիսներու յանձնում՝ «Օրպիթ 3 եւ 4», «Հարուի», «Յերմէս», «Յերոն» անօդաչուներու եւ կործանիչներու էջքի ու թռիչքի համար:

- Ազրպէյճանի անվտանգութեան ուժերու եւ բանակի զգալի կուտակում Իրանի սահմաններուն՝ Իրանի վրայ Իսրայէլի յարձակումէն միայն քանի մը օր առաջ, այն ենթադրութեամբ, որ Թել Աւիի երաշխիքներով Իրանի պարտութիւնն ու կործանումը անխուսափելի են: Այս ուժերու կուտակումը երկու նպատակ հետապնդած է.

1. Անջատողական շարժումներուն հոգեբանական եւ գործնական աջակցութիւն եւ նախապատրաստում քրտական մարտական միաւորներու, «Գորշ գայլերու» եւ այլ հրոսակախուժերու ուղարկման Սուրիայէն, հիւսիս-արեւմուտք՝ Իրանի ռազմական ենթակառոցներու վերջնական ոչնչացումէն ետք:

2. Ապահով Գորտուղի ստեղծում Իսրայէլի համար, Ֆորտոյի ռմբակոծումէն ետք, Պաքուի միջոցով Իրանի հարստացուած իւրանիւմը գողնալու եւ դուրս բերելու ծրագիրը իրականացնելու (նման է 2018 թուականին Քահրիզիկէն Իրանի միջուկային փաստաթուղթերը գողնալու եւ Ազըրպէյճանի միջոցով զանոնք դուրս բերելու Մոսադի ծրագրին):

- Կեղծ Չանգէլանի միջանցքի (ՕԹԱՆ-ի թուրանական միջանցք) գաղափարի ռազմական յառաջ մղում, միաժամանակ սիոնական վարչակարգի ռազմական յարձակումին հետ՝ սահմանը փոխելու եւ Իրանի աշխարհաքաղաքական դիրքը խեղդելու նպատակով:

- Միջանցք, որ նաեւ ռազմական գործառնոյ ռուին է աջակցութիւն կը ստանայ սիոնական եւ լոնտոնեան ճակատներէն, քանի որ այդ միջանցքի տարածքը նաեւ հարթակ է Թեհրանի վրայ յարձակումներու համար: Ռազմական յարձակումին ընթացքին սիոնական կործանիչները օգտագործած են նաեւ Թուրքիոյ հարաւարեւելեան ուղին:

- Խաբուած անձերու եւ ցեղային անջատողականներու նախապատրաստում եւ հաւաքագրում 2003 թականէն, ի դէմս արտերկրի պետական կոմիտէի կամ Իրանէն դուրս գտնուող ազրպէյճանցիներու եւ անոնց տնտեսում ՍՕԵՄՆ նաւային ընկերութեան միջոցներու հաշուոյն:

- Հրթիռներու եւ զէնքի զինանոցի («Պարաք» ՅՕՊ համակարգ) ստեղծում սիոնական վարչակարգի համար Ազրպէյճանի մէջ, աւելի քան տասը տարի Իսրայէլէն զէնքի լայնածաւալ գնումներու քողին տակ, անոնք դարաբաղեան պատերազմին օգտագործելու պատրուակով:

- Տեղեկատուութեան տրամադրում Ազրպէյճանի հիւսիսը գտնուող Կապալայի տեղորոշիչ կայանէն՝ իրանական երկինքը



վերահսկելու, նաեւ իրանեան հրթիռներու եւ անօդաչուներու տեղաշարժին հետեւելու համար: Կապալան կը նկատուի Կովկասի եւ արեւելեան Եւրոպայի մէջ խորհրդրային մեծագոյն տեղորոշիչ կայաններէն մէկը:

- 12-օրեայ յարձակումի ընթացքին Պաքուի կողմէ սիոնական վարչակարգին տեղեկատուական լիակատար աջակցութիւն, պաշտօնական ցանցերով քրտական եւ թրքական անջատողական յայտարարութիւններու պատկերասփռում, ինչպէս նաեւ՝ սիոնական վարչակարգի կողմէ յեղափոխութեան առաջնորդը սպաննելու սպառնալիքի հաւանութիւնը եւ Իրանի առաջնորդի նկատմամբ «սատանայ» բառի օգտագործումը:

- Պաքուի՝ որպէս Իրանի հետ սահմանակից այն միակ երկիրը, որ հրաժարած է դատապարտել սիոնական վարչակարգի ռազմական յարձակումը մինչեւ 12-օրեայ պատերազմի աւարտը:

Կարելի էր աւելցնել եւս տասնեակ կէտեր:

Այժմ, Ալիեւներու ընտանիքի պատմական սխալէն ետք, իւրայատուկ հնարաւորութիւն ստեղծուած է փոխելու շրջանային հաւասարակշռութիւնը եւ ամրապնդելու երկրի պաշտպանունակութիւնն ու զաւթան ներուժը, քանի որ այս չարիքին պատասխանելը Իրանի օրինական իրաւունքն է՝ իիմուած ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածի վրայ:

Հեռանկարին մէջ Ազրպէյճան սիոնական վարչակարգին դէմ ռազմական գործողութիւններու հիմնական թատաղանք դարձնելը կը զօրացնէ սիոնական վարչակարգին Իրանի մահաբեր հարուածներու զսպող ուժն ու ազդեցութիւնը: Այս պայմանաւորումն է անով, որ Ազրպէյճան, ըլլալով նաւթով ամենահարուստ երկիրներէն մէկը, սիոնական վարչակարգի եւ անոր հետ կապուած Եւրոպական կարգ մը երկիրներու նաւթի եւ կազի հիմնական մատակարարն է:

Ներկայիս Ազրպէյճանը կը մատակարարէ վարչակարգին կողմէ սպառուող նաւթի աւելի քան 60 առ հարիւրը՝ Պաքու-Ճէյհան խողովակաշարով, որ կը շահագործուի բրիտանական Պի.Փի. ընկերութեան կողմէ: Պաքուի նաւթավերամշակման գործարանը եւ Սումկայիթի նաւթային կեդրոնները նոյնպէս վառելանիւթ կը մատակարարեն սիոնական վարչակարգի կործանիչներուն եւ բանակին:

Կազայի պատերազմի եւ 12-օրեայ ռազմական յարձակումի ընթացքին Պաքուն երաշխաւորած է վարչակարգի նաւթի եւ վառելանիւթի մատակարարումը, յատկապէս՝ Հայֆայի նաւթավերամշակման գործարանին հասցուած հարուածէն ետք: Բացի անէ՛ք՝ Ուքրանիոյ պատերազմէն ետք Պաքուն աջակցութիւն ցուցաբերած է այդ պատերազմին ՕԹԱՆ-ի ճակատին՝ Հարաւային Կովկաս-TANAP-TAP խողովակաշարով տարեկան շուրջ 13 միլիառ խորանարդ մէթր կազ տեղափոխելով տասը եւրոպական երկիրներ:

Ազրպէյճանի սիոնական վարչակարգին աջակցող ուժանիւթային եւ ռազմական ենթակառոցներուն օրինական հարուածները վնաս կը հասցնեն միայն Թել Աւիին, ի դէմս Պաքուի՝ սիոնական վարչակարգի դաշնակցին, ինչպէս նաեւ այդ վարչակարգին աջակցող եւրոպական կարգ մը երկիրներուն՝ Անգլիոյ գլխաւորութեամբ:

Ինչպէս սիոնական վարչակարգը օգտագործած է եւ կ'օգտագործէ բոլոր միջոցները՝ Իրանը անակնկալի բերելու համար, այնպէս ալ Իրան պէտք է գործածէ օրինական բոլոր միջոցները՝ խստօրէն պատժելու այդ վարչակարգը եւ անոր դաշնակիցները, որպէսզի անոնք այլեւս չհամարձակին գաղտնի ծառայել Իրանի թշնամիներուն եւ ձեւանալ բարեկամ:

Կովկասը կրնայ ըլլալ սիոնական վարչակարգի նկատմամբ Իրանի պատմական յաղթանակի բանալին:

Պատրաստե՛ք ՆԱՐԻ ԳԱԼԵՄԲԵՐԵԱՆ

ՄԵՐ ՊԱՊԵՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ՝ ՈՒՆՏԱՏԵՂԻ

Փոքր տարիքեւ ճամբորդելը շատ կը սիրէի եւ կեանքիս ընթացքին ամէն առիթօգտագործեցի, որ երազս իրականացնէ: Այս ճամբորդութիւններուն ընթացքին յաճախ հանդիպած եմ տարեց անձերու, որոնք ըսած են, որ ձեր տունը ուխտատեղի եղած է, որովհետեւ 1935-ին, երբ Սօսէ Մայրիկը Պէյրութ եկած է, ան նախընտրել է մեր տունը իջեանիլ, քան թէ՝ «Թուրքիկի պանդոկը», ուր կուսակցական հիւրերը կը հիւրընկալուէին:

Սօսէ Մայրիկը Մուշէն մտերիմ եղած է մեծ մօրս՝ երեցկին Եղիսաբէթին, իսկ Սերոբ Աղբիւրն ալ մեծ հօրս՝ տէր հաշատուր քահանային: Նաեւ կը յիշեմ, որ իրենց գաւակներն ալ՝ Յակոբն ու Սամսոնը հօրս՝ Յամազասպին ընկերները եղած են, բայց դժբախտաբար զոհ գացած են ջարդերուն:

1987-ին, երբ Ամերիկայի Ֆրեզնօ քաղաք այցի գացած էի, հոն հաւաքի մը ընթացքին հանդիպեցայ սիսեցի տարեց անձի մը, Պէյրութէ գաղթած էր: Երբ զիս ծանօթացուցին, որ Պէյրութէ եմ՝ Յամազասպ Տէր հաշատուրեանին աղջիկը, ան յանկարծ տեղէն ելաւ յուզուած, եկաւ ճակատս համբուրեց եւ ըսաւ. «Ի՜նչ զուգահիւսութիւն, 50 տարիներ առաջ ես քանի մը անգամ Յայաշէնի ձեր տունը այցելած եմ խումբ մը սիսեցի ընկերներու հետ, որովհետեւ ձեր տունը իջեանած էր Սօսէ Մայրիկը, եւ այդ տունը կարծես ուխտատեղիի վերածուած էր, եւ կուսակցութիւնը դասաւորած էր, որ շրջաններու ընկերները հերթով գալ եւ այցելելն հայ ազգի հերոսուհին»:

Այս արտայայտութիւնը յաճախ լսած եմ շատ մը անձերէ, անոնց կարգին՝ Սուրեն Անթոյեանէն եւ Յայկազ Եափուճեանէն, որոնք յաճախ հրապարակաւ նոյն վկայութիւնը տուած են:

Իսկապէս մեր տունը ուխտատեղի եղած է, արդարեւ, հոն իջեանած կամ այցելած են՝ Գասպար Իփէկեանը՝ Յայաշէնի եկեղեցւոյ շինութեան շրջանին, իսկ Յուրի Իփէկեանը իր հօր հոգեհանգստեան առիթով:

1951-ին Արմենուհի Գեւորեանը (Գեղամ Տէր Կարապետեանին աղջիկը, որ Ռուբէն Տէր Միխսեանին հարսն էր), որ Ֆրանսայէն Պէյրութ եկած էր տարօնցիներուն երգերու մենահամերգ մը տալու, մեր տունը մնաց իր կեցութեան ատեն:

Նաեւ սասունցի ֆետայի Զեռի Թադոն ամիսներով մեր տունը մնացած է: Նաեւ հիւրաբար մեր տան հիւրերը՝ եղած են Եղապող Տարօնեանը, Խոսրով Թիւթիւնճեանը, Ժան Էլոյեանը՝ Երեւանէն, Կարօ եւ Լույս Սասունիները, Վահան Փափագեանը (Կոմս), իսկ տօնական օրերուն հայրս մեզ այցի կը տաներ անոնց տունը, որ ճեմարանին ճիշդ դիմացն էր: Բեզլար Նաւասարդեանն ալ ժողովէ մը ետք փափաքել է մեր տունը այցելել եւ շատ գոհ մնացել էր: Նաեւ Վարդգէս Փափագեանը (Սուրիոյ՝ Երեմիոյան Յրաչ Փափագանին տղան) ընտանեօք յաճախ մեզի հիւր եղած են:

Եղբայրս՝ Արտաշէսը, օր մը տուն բերաւ Շահան Նաթային, նաեւ՝ եգիպտահայ երգիծանկարիչ Սարուխանը, որուն ես Գահիրէի մէջ այցելած էի քանի մը տարի առաջ: Մեր տան հիւր եղած են նաեւ Լեւոն Յայկաբէրեանը եւ շատ մը հայրենի գրագետներ ու արուեստագետներ՝ Արքայամ Ալիքեանը, Սասուն Գրիգորեանը, Վարդգէս Յամազասպեանը, Վալա Սարգիսը՝ ընկերակցութեամբ Փոլ Կիրակոսեանին, Սիմոն Սիմոնեանը ընտանեօք եւ Ամերիկայէն ոսկրաբուժ տոքթ. Յամբարձում Գեղիքեանը, Արսէն Կիտուրը, որ հօրս այցելութեան առիթով անոր նուիրած է «Պատմութիւն Սոցիալ հնչակեան կուսակցութեան» գիրքը՝ մակագրուած «Իմ վաղեմի անաչառ ընկերոջ» Յամազասպ Տէր հաշատուրեանին»:

Հօրս այցելած են պետական անձաւորութիւններ, ինչպէս՝ Երեմիոյաններ Ղասսան Թուէլինի, Ֆուատ Պուրթուրը, որոնք նաեւ մասնակցեցան հօրս յուղարկաւորութեան:

2008-ին ալ առիթով մը ինծի այցելեց նախարար Խալիլ Յարուին:

Ծնողքս չափէն աւելի մարդասեր եւ հիւրընկալ եղած են եւ այս յատկութիւնները փոխանցած են մեզի:

Այսօր, երբ յետադարձ ակնարկ մը կը նետեմք մեր տունը այցելած անձաւորութիւններուն վրայ, կը զարմանամ, թէ մեր համեստ ծնողքը իրենց այդ օրերու նեղ պայմաններուն մէջ ինչպէ՞ս կրցած են այս



տեսակ յարգարժան անձեր հիւրընկալել: Յարգանք իրենց:

Հոս տեղին է յիշել, թէ Սօսէ Մայրիկը մեր տունը կեցութեան միջոցին հօրմէս կը խնդրէ, որ՝ «Եթէ զաւակ մը ունենաս, իմ անունս՝ Սօսէ դիր անունը»: Երբ ես կը ծնիմ, ծնողքս որոշած էին Սօսէ անունով, բայց դժբախտ պատահարով մը իմ ծնունդէս 8 օր առաջ հօրեղբայրս՝ Արշակը կը մահանայ, ծնողքս՝ ի յիշատակ հօրեղբորս, զիս կ'անուանեն Արշակուհի:

Հայրս Սօսէ Մայրիկին տուած իր խոստումը յարգելու համար յաջորդ աղջիկ զաւակը կ'անուանէ Սօսէ:

Սակայն իբրեանեան անձնաթուղթին մէջ Սօսի գրուած է, քանի որ արաբերէն-նուիրումին իր մասնագիտութեան՝ ան տիրացաւ «Ֆլորենս Նայթինգլ» (Florence Nightingale) մրցա-

նի մէջ «Է» գիր չկայ, բայց մեզի համար ան միշտ եղած է Սօսէ:

Սօսէ ժրաջան աշխատանքով բարձրագոյն ուսում ստացաւ եւ մասնագիտացաւ հիւանդապահութեան մէջ՝ հասնելով «BSN» Master's տիտղոսներուն եւ ծառայեց 44 տարիներ Պէյրութի ամերիկեան համալսարանի հիւանդապահութեան դպրոցին մէջ:

Շնորհիւ իր բարեսէր եւ հոգածու նկարագրիին ու նուիրումին իր մասնագիտութեան՝ ան տիրացաւ «Ֆլորենս Նայթինգլ» (Florence Nightingale) մրցա-



նակին, 1965-ին: Այս մրցանակը կը շնորհուի աւարտական դասարանի լաւագոյն աշակերտին: Իսկ երբ ան գործէն դադարեցաւ, զինք կոչեցին «Մամա Սօսի» մակդիրով, եւ այդպէս ալ կոչուած է իր միջավայրին մէջ: Ան նաեւ 2001-ին ընտրուած էր Յայկազեան համալսարանի Տիկնանց միութեան կողմէ «Տարուան մայրը» (Mother of the year):

Ան իր կրթական ծառայութեան կողքին, շատ մը բարեսիրական կազմակերպութիւններու մէջ ունեցած է բեղուն գործունեութիւն, ինչպէս՝ Աւետարանական դպրոցներու Կրթական խորհուրդի փոխատենպետ տարիներու ընթացքին, Հայ աւետարանական եկեղեցւոյ Նախադատ ատենանի առաջին կին դատաւորը, դասախօսած է հայկական դպրոցներու եւ երիտասարդական կազմակերպութիւններու մէջ, տուած է հանրային դասախօսութիւններ՝ նաեւ կնոջական դատարկութեան վերաբերող:

Իր ասպարեզին վերաբերող այս բոլոր համագումարներու եւ միջազգային գործունեութիւններու մասնակցութեան կողքին, ան 45 տարիներ անընդհատ ծառայած է «Գարակեօգեան» յիշատակի ձեռնարկի «Մայրերու եւ զաւակներու հոգատարութեան կեդրոն»-ի (Mother & child care center) յանձնախումբին՝ իբրեւ գործօն վարչական անդամ տեղական կազմին մէջ:

Այս երկարամեայ ծառայութեան համար 18 դեկտեմբեր 2024-ին պարգևատրուեցաւ հաստատութեան Ամերիկայի վարչական կազմին կողմէ՝ իր անխնայ, նուիրեալ եւ երկարամեայ ծառայութեան համար ոսկի մետալով մը, որ կը կրէ Հաւուրտ Գարակեօգեանի կիսանդրիին պատճենը (վաղամեռիկ (14 տարու) մէջ կողմը, իսկ միւս կողմը գրուած է «Մամա Սօսի»): Հոս տեղին է յիշել, որ այս շքանշանը առաջին անգամն է, որ կը շնորհուի Լիբանանի վարչական անդամի մը: Երկրորդ մետալ մըն ալ տրուեցաւ տեղական վարչութեան կողմէ:

Այս ձեռով արդեօք Սօսէ Մայրիկին առաջարկը իրականացա՞ւ՝ իրեն արժանաւոր յաջորդ մը ունենալով, ինք ազգային, յեղափոխական անձնաւորութիւն, իսկ Մամա Սօսին կրթական, ազգային, մարդասիրական գործունեութեամբ: Յիշատակը միշտ վառ մնայ Սօսէ Մայրիկ: Վարձքը եւ ուժը անսպառ Մամա Սօսի:

ԱՐՇԱԿՈՒՅ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

2 յունիս 2025

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ՝ ԹՐԱՄՓԻՆ, ՃԱՄԲԱՆ՝ ԱԶՐՊԵՅՃԱՆԻՆ, ԻՍԿ ԶԱՅԱՍՏԱՆԻՆ՝ ՈԶԻՆԶ



Ինչպէս նախատեսուած էր, Նախագահ Տանըլտ Թրամփը Կովկասի մէջ «խաղաղութեան» համար Սպիտակ տան մէջ կազմակերպուած վեհաժողովը վերածեց ծիծաղելի ներկայացման մը՝ անընդհատ ինքնագովութիւն կատարելով, ինքնիրեն վերագրելով այնպիսի բաներ, զորս իրականութեան մէջ չըրած. մեղադրելով Նախագահ Պայտընը եւ յաճախ շեղելով հանդիպման թեմայէն:

Թրամփ միայն մէկ նպատակ կը հետապնդէր Սպիտակ տան մէջ այս միջոցառումը կազմակերպելով՝ ապահովել հաղաղութեան Նոպելեան մրցանակը՝ իբր թէ Հայաստանի եւ Ազրայէճանի միջեւ խաղաղութեան միջնորդութեան համար, պնդելով, թէ ոչ ոք կրցած է այդ մէկը ընել վերջին 35 տարւան ընթացքին:

Թրամփ իր Truth Social հարթակին վրայ անամօթաբար զովաբանեց ինքզինք. «Բազմաթիւ ղեկավարներ փորձած են վերջ դնել այդ պատերազմին, սակայն ցարդ՝ ապարդիւն, եւ միայն հիմա՝ շնորհակալութիւն «Թրամփին»: Ան նաեւ ինքնիրեն վերագրեց կարգաւորումը քանի մը այլ հակամարտութիւններու, որոնց մէջ որեւէ մասնակցութիւն չէր ունեցած: Ան յարմարօրէն չիշատակեց իր ամբարտաւան Նախընտրական խոստումը՝ լուծել ուղբանական պատերազմը՝ «Նախագահի պաշտօնը ստանձնելէ 24 ժամ անց»: Ան արդէն եօթը ամիսէ ի վեր Նախագահ է, սակայն պատերազմը կը շարունակուի:

Խորամանկօրէն, վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու Նախագահ Իլիհամ Ալիեւը, տեղեան ըլլալով Թրամփի ետապաշտական հակումներուն, խանդավառութեամբ սկսան քննիլ անոր: Նոյնիսկ առաջարկեցին ստորագրել միացեալ նամակ՝ կոչ ուղղելով Նոպելեան կոմիտէին՝ Թրամփին շնորհելու խաղաղութեան մրցանակ, քայլ մը, որ անոր մեծ հրճուանք պատճառեց:

Ազրայէճանի հիմնական մասէն Հայաստանի վրայով դէպի Նախիջեան տանող տարանցիկ ճամբու լուրջ հարցի արծարծումը արագօրէն վերածուեցաւ զաւեշտի, երբ յայտարարուեցաւ, որ ակնկա պիտի կոչուի «Թրամփի ուղի» յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» (TRIPP). Թրամփի փառամոլութեան յաւելեալ օրինակ մը:

Խաղաղութեան համաձայնագիրը, որուն մասին ամիսներէ ի վեր կը խօսի Փաշինեան, չստորագրուեցաւ, ինչպէս յայտարարուած էր, այլ միայն Նախաստորագրուեցաւ Նախորդ շաբաթ Սպիտակ տան մէջ կայացած վեհաժողովին ընթացքին՝ վերածուելով ոչ պարտադիր փաստաթուղթի: Ալիեւ շահագորգումը չէ համաձայնագրի ստորագրութեամբ՝ գիտակցելով, որ այդպիսով պիտի զրկուի իր լծակներէ՝ պահանջելու յաւելեալ զիջումներ Փաշինեանէն, որ մինչեւ օրս ինքնակողմած է անոր բոլոր պահանջներուն: Ալիեւ պիտի յետաձգէ պայմանագրի ստորագրութիւնը, մինչեւ որ Փաշինեան կատարէ Ազրայէճանի յաւելալ պահանջ մը՝ փոփոխութիւններ կատարելու Հայաստանի սահմանադրութեան մէջ, գործընթաց մը, որ պիտի տեսէ յաւելեալ 10 ամիս:

Հայերը տեղեան իսկ չեղան ստորագրուած համաձայնագրի պայմաններէն: Միայն օրեր անց հրապարակեցաւ անոր բովանդակութիւնը, եւ յետապահեց, թէ Փաշինեան ի՜նչ յաւելեալ զիջումներ ըրած է Ազրայէճանին:

Փաշինեան այս հռչակագիրով նաեւ կը դրժէ 2018-ին Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ հսկայ բազմութեան դիմաց տուած իր խոստումը, որ որեւէ համաձայնագիր չի ստորագրել՝ առանց Նախապէս հանրութեան համաձայնութիւնը ստանալու:

Փաշինեան խաբէր իր հասարակութիւնը՝ պնդելով, որ իբր թէ խաղաղութիւն կը բերէ Հայաստանին, յոյս ունենալով, որ այդ խոստումը պիտի օգ-

նէ անոր պահպանել իշխանութիւնը յաջորդ տարուան խորհրդարանական ընտրութիւններէն ետք: Ալիեւի համար այս, այսպէս կոչուած, «խաղաղութեան համաձայնագիր»-ը պարզապէս թուղթի կտոր է, զոր ան կրնայ որեւէ պահու խախտել ստորագրութենէն ետք: Եթէ Ազրայէճան յարձակի Հայաստանի վրայ, ո՛չ արեւելեան, ո՛չ ալ արեւմտեան տերութիւնները կը միջամտեն: Հայ հասարակութիւնը պէտք չէ ի զուր ակնկալէ, որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը զօրքեր պիտի ուղարկէ՝ պաշտպանելու Հայաստանի սահմանները: Նախորդ ուրբաթ ստորագրուած յուշագիրը յստակօրէն կ'ըսէ, որ ակնկա զուտ առեւտրական եւ ոչ թէ ռազմական համաձայնութիւն է:

Փաշինեանի հակասական դիրքորոշումներուն վերաբերող բազմաթիւ հարցեր կան: Ամիսներ առաջ, երբ հայ լրագրող մը անոր հարցոց, թէ արդեօք ան պիտի քննարկէ՞ տարանցիկ ուղիի կառավարումը միջազգային կազմակերպութեան յանձնելու հարցը, Փաշինեան կտրականապէս մերժեց այդ զաղափարը: Այնուամենայնիւ, ան այժմ տարանցիկ ուղի կառավարում յանձնեց տար կառոյցի:

Ահա դրժուած խոստում մը եւս: Քանի մը ամիս առաջ, երբ Ալիեւ պահանջեց, որ Հայաստան համաձայնի լուծարել ԵԱՀԿ Մինսքի խումբը, Փաշինեան ըսաւ, որ այդ մէկը կը կատարէ «խաղաղութեան համաձայնագիր»-ի ստորագրութենէն ետք: Բայց եւ այնպէս, Նախորդ ուրբաթ Փաշինեան ստորագրեց Սպիտակ տան յուշագիրը, որով կոչ կ'ուղղուի լուծարելու Մինսքի խումբը, հակառակ անոր որ Ալիեւ չէր ստորագրած համաձայնագիրը:

Ալիեւ մտահոգիչ է, որ Նախաստորագրուած «խաղաղութեան համաձայնագիր»-ը չի բովանդակել որեւէ դրոյթ Պաքուի մէջ պահուող հայ պատուիրներու ազատ արձակման, 2021-է ի վեր Հայաստանի բռնագրաւուած տարածքներէն ազրայէճանական զօրքերու դուրսբերման կամ 120 հազար բնակի տեղահանուած արցախահայերու վերադարձի իրաւունքին վերաբերեալ, հակառակ Միջազգային քրեական դատարանին կողմէ անոնց հայրենադարձութեան վերաբերեալ որոշումին: Ասիկա վարձատրութիւն է Ալիեւի յանցաւոր վարքագիծին: Մինչեւ Ազրայէճան չվերանայի իր դիրքորոշումը այս հարցերուն մէջ, Փաշինեան պէտք է հրաժարի Նախաստորագրել կամ ստորագրել պայմանագիրը: Յուսամ՝ ան չի վստահիր խոստումներուն Թրամփին, որ ապրիլի 24-ին մերժեց ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը, հակառակ անոր որ Զոնկրեսը եւ Նախագահ Պայտընը ճանչցած էին զայն:

2020-ին Հայաստան համաձայնեցաւ Ազրայէճանին տրամադրել տարանցիկ ուղի իր տարածքով՝ փոխարէնը ստանալով Արցախը Հայաստանին կապող Լաչինի միջանցքը: Այդ թուականէն ի վեր Ազրայէճան բռնագրաւած է Արցախն ու Լաչինի միջանցքը՝ վերացնելով Հայաստանի արտաւորութիւնը պահպանելու զինադադարի համաձայնագիրը: Այս տարանցիկ կապը «Թուրանի ճամբայ»-ն է՝ թրքական աշխարհի դարաւոր երազը, որ Թուրքիան եւ Ազրայէճան պիտի կապէ Կեդրոնական Ասիոյ թրքալեզ անարապետութիւնները: Յաւուք, այս հարցերը կարծեք շատ քիչ կը հետաքրքրեն Փաշինեանը, որ աւելի շատ կեդրոնացած է իր պաշտօնը պահելու, քան Հայաստանի շահերը պաշտպանելու վրայ:

Սպիտակ տան արարողութեան ընթացքին Ազրայէճանի հիմնական ձեռքբերումներէն մէկը եղաւ 1992-ին Զոնկրեսի կողմէ ընդունուած «Ազրայէճանի աշակցութեան աքթ»-ի 907-րդ յօդուածի կասեցումը, որ կ'արգիլէր

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
www.TheCaliforniaCourier.com

Շաբ.ը՝ Էջ 6

ԹՐԱՄՓ-ՓՈՒԹԻՆ...

Շարունակուած 3-րդ էջէն

խլելու որոշում մը, հոգ չէ թէ մէկ կողմէ՝ աշխարհի չորս ծագե-րէն կը դիմագրաւէ «Մի՛ ընէր»-ները կոչեր ու քննադատութիւն-ներ (բոլորն ալ խօսքի ապուրի բնոյթով), իսկ միւս կողմէ՝ նոյ-նինքն Իսրայէլէն ներս վերջին շաբաթներուն բարձրացող ընդվզումի ալիքը, որ տարածուած է ժողովրդային զանգուա-ծին ու զինուորականներու՝ գործող թէ հանգստեան կոչուած բանակայիններու շարքերուն վրայ: Ամերիկեան բացայայտ զօրակցութեամբ՝ Սուրիոյ մէջ տեղի ունեցած իշխանափոխու-թենէն ասդին, բազում արհաւիրքներ եւ «ներքին արհւնահե-ղութիւններ» խռովցեցին - եւ կը խռովէն - այդ երկիրը, թրքա-կան եւ իսրայէլեան ուղղակի եւ բացայայտ միջամտութիւննե-րը ստեղծած են խառնարան (չենք անտեսեր քիւրտերու եւ այ-լոց շարժումները), եւ ահա յանկարծ... Դամասկոսի իշխանու-թիւնները Մոսկուայի աջակցութեան կը դիմեն՝ զիրենք պաշտ-պանելու համար, եւ ե՛րբ, ճի՛շդ այն պահուն, երբ կը պատրաստ-ւի Ալասքայի սեղանը: Ամերիկեան եւ արեւմտեան բացայայտ զօրակցութեան յենած Լիբանան ալ արդեօք պիտի մտածե՞՞ նման քայլի մասին: Անշուշտ հարցականներ կախուած են Իրանի հանդէպ ամերիկեան թշնամանքին եւ մեղմացումի հաւանականութիւններուն վերեւ: Բնական է, որ նման հարցեր պիտի քննարկուին (զոնէ հեռու ամբոխահաճութենէ եւ քարոզ-չութենէ՝ Ուաշինկթընի եւ Մոսկուայի շահերուն ու հաշիւնե-րուն պարունակին մէջ): Միջին Արեւելքի այս՝ կեդրոնական պատկերին կողքին, կան նաեւ «լուսանցքային» հաշուարկներ, որոնք կը տարածուին Եգիպտոսէ Լիպիա ու Շոցի երկիրներ, ներառեալ Եմէլը: Ուշադրութեան առանձին կեդրոն է Էրտո-ղաւի Թուրքիան, որ, ինչպէս ծանօթ է, ՕՌԱՆ-ի անդամ է եւ սակայն, վերջին տարիներուն մերձեցում կը խաղայ Ռուսիոյ հետ (հին խաղին նոր էջը, ճատրակի տախտակին վրայ օգտա-գործուող քար մը), երբեմն դժգոհ ձգելով դաշնակիցները, միւս-չէս իսկ բացայայտ կամ չինձու տագնապներ ստեղծելով անոնց հետ (Ֆրանսա): Այս ու նման պարագաներ չեն կրնար անտարբերութեամբ դիտուիլ: Ալասքայի բանակցողներուն կողմէ: Չմտնենք յաւելեալ մանրամասնութիւններու մէջ:

Գ. ԿՈՎԿԱՍ-ն ու մեզ շահագրգռող՝ Յայաստան-Արցախը: Ալիեւի եւ Փաշինեանի հետ հանդիպումէն հազիւ շաբաթ մը ետք է, որ Թրամփ պիտի հիւրընկալէ Փութինը, որուն ակնոցով, Կովկասը՝ Կրաստանէն մինչեւ Ազրպէյճան ու Յայաստան-Ար-ցախ, կը մնայ շահեկան գօտի: Անվիճելի է, որ Ուքրանիոյ ճախճախուտին մէջ ընկղմած Ռուսիա վերջին տարիներուն հարկարդուեցաւ նահանջ արձանագրել այս գօտիէն (մի՛շտ իր շահերուն հաշուարկներով), մինչեւ իսկ իր դաշնակից Իրանի նկատմամբ ցուցաբերեց որոշ կրատրականութիւն (ամերի-կեւիսրայէլեան յարձակումի օրերուն), սակայն անոր համար այս գօտին կը մնայ ճատրակի անվերջանալի խաղին մէջ ետ-ու-յառաջի մրցադաշտ մը: Թրամփ, Սիւնիքի հարաւէն անցնող եւ իր անունով մկրտուած ճամբան շահելով, ապահովեց շա-հող խաղաքարտ մը՝ հաճոյացնելով Ազրպէյճանն ու Թուրքի-ան, եւ պատրանք նուիրելով Փաշինեանի Յայաստանին: Թրամփ հիմա կը մտածէ, որ Ազրպէյճանին զենքի նոր վա-ճառքներուն ճամբով՝ նկատառելի եկամուտ պիտի ապահովէ. անոր համար մագաչափ մը իսկ տարբերութիւն չ'ըներ, թէ Յա-յաստան ընդունած է Միւսքի խմբակէն հրաժարիլ, ու Ալասքա-յի մէջ կրնայ Փութինի հետ «համակեցութեան» տարագ մը գըտ-նել (ռուսական կողմը գիտէ, որ շրջանին մէջ իր զինուորական ներկայութիւնը տակաւին խաղաքարտ մըն է իր ձեռքին, կըը-

նայ սակարկութեան նստիլ մինչեւ իսկ անոր մասին նոր տա-րագումի մը հեռանկարով): Չարմանալի չէ, որ Մոսկուա «ճկուն» արձագանգ մը ունեցաւ Միւսքի խմբակին լուծարման մասին, առանց ծածկելու իր անբաւարարութիւնը (յիշեցուց, որ 9 տոյեմբերի յայտարարութիւնը բոլորովին մեռած չի նկատեր): Չարմանալին այն է, որ Ֆրանսա, իբրեւ Եւրոպայի յառաջա-տար ներկայացուցիչ, ծափողջուկեց զինք կովկասեան ճաշա-սեղանէն վանելու ուաշինկթընեան համաձայնութիւնը (Միւս-քի խումբին երրորդ անդամն էր), մինչդեռ անդին, Եւրոպացի ընկերներուն հետ ոգի ի բռնի կ'աշխատի ռուս-ամերիկեան բանակցութեանց սեղանին շուրջ աթոռ մը ապահովելու իրենց հովանաւորեալին՝ Չելէսքքիի, նոյն խանդով կը զօրակցին անոր պահանջներուն: (Յայտնապէս Եւրոպացի խաղաղապահ դե-տերուն Յայաստանէն հեռացումս ալ եփած ճաշ է, կը մնայ տեսնել, թէ Ալասքայէն ետք, ի՞նչ դեր-ճակատագիր պիտի վիճակուի ռուսական ուժերուն եւ զօրակայաններուն):

Դ. ԱՓՐԻԿԵ ԵՒ ԱՅԼՈՒՐ. Երբ աշխարհի ուշադրութիւնը ըստ եուրեան (եւ շնորհիւ քարոզչական մեթեաներու) կեդրոնացած է վերոյիշեալ երեք տաք գօտիներուն վրայ, անդին, կան ճատրակի խաղատախտակին այլ քառակուսիները, ինչպէս՝ Ափրիկէ, Հա-րաւային Ամերիկա եւ Շայրագոյն Արեւելք: Երկար սիւնակներ պէտք պիտի ըլլան՝ գէթ հպանցիկ ակնարկութիւններ ընելու այդ գօտիներու իրադարձութիւններուն, հետե-ւաբար կը բաւականանաք քանի մը Նշու-մով: Յիշեալ տաք գօտիներուն դաշտերէն անդին, Ափրիկէի մէջ, օրինակի համար, վերջին տարիներուն տեղի կ'ունենայ պա-րանաձգութեան նոր խաղ մը. կարգ մը ափ-րիկեան երկիրներ գործնապէս վանեցին նոր գաղթաւորներ, մասնաւորաբար՝ Ֆրանսան ու անոր «խաղաղարար»-ի զին-ւորական ներկայութիւնը, այլ շարժումներ կը խմորուին կամ գործնական նոր արտա-յայտութիւններ կը գտնեն, ռուսական յա-ռաջխաղացք մը ակնբերէ կը դառնայ Սեւ ցամաքամասի՝ կարգ մը գօտիներուն մէջ (շատ բան հեռու կը մնայ-կը պահուի աշ-խարհի, նաեւ մեր՝ հայերուս տեսողութեան դաշտէն):

Ճամբայ չեւանք սպառիչ պատկեր մը ներկայացնելու յաւանութեամբ, այլ փորձ ըրիմք ցոյց տալու, որ Թրամփ-Փութին հան-դիպումը, Ուքրանիոյ շուրջ հակամարտու-թեան կողքին, կրնայ սեղանի վրայ ունենալ նաեւ աշխարհը - նաեւ մեզ՝ հայերս - յու-գող, շահագրգռող հարցեր, որոնց մասին թերեւս շատ բան չխօսուի հանդիպումէն ետք ալ:

Իսկ եթէ ամերիկեան հողի վրայ կայացող գերաստիճանը ինքզինք հեռու պիտի պահէ նման հրատապ հարցերու քննար-կումէն, կը նշանակէ, որ գերպետութիւններու գործելակերպին մէջ նահանջ, անկում կայ (գաղտնիք չէ, որ կ'ապրինք անկում-ներու դարաշրջան մը): Հետեւաբար, աշխարհը պիտի սպասէ, որ այլ սուր ու մահասփիւռ-աւերիչ տագնապներու համար, նոր օղապարիկներ տարուին, իսկ աւելի՝ կարեւորը՝ Ալասքա-յի օղապարիկը կարենայ թռիչք առնել եւ գերծ մնալ պայթելու վտանգէն:

13 օգոստոս 2025

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԸ՝ ՅՈՅՍԻ...

Շարունակուած 3-րդ էջէն

անմարմիններու՝ հրեշտակներու հրեղէն դասերով, ամենասրբուհի Կոյսը լուսա-փայլ ամպով փոխարդեց դէպի երկնային անստուեր Լոյսը:

Քրիստոսի մահը, յարութիւնը, երկինք համբարձումը եւ Աստուածամօր դէպի երկինք վերափոխումը, հաւատացեալներուս համար յաւիտենական կեանքի գո-յութեան կենդանի եւ զօրեղ վկայութիւն դարձան: Աստուածամայրը, հակառակ երկրի վրայ ապրած մայր մը ըլլալուն, մեզի ցոյց տուաւ, թէ մահը մեր կեանքին աւարտը չ'է՝, այլ՝ նոր կեանքի մը նոր սկիզբը եւ նոր հանգրուան մը: Մարիամ իր սրբակենցաղ կեանքով մեզի սորվեցուց, թէ ինչպէ՛ս պէտք է ապրինք ժամանա-կաւոր այս կեանքը, որպէսզի կարենանք անժամանակ եւ յաւիտենական կեանքը ժառանգել:

Երբ պահ մը փորձենք առանձնացնել Տիրամօր նկարագրային գիծերը, պիտի տեսնենք, որ ան բոլոր ժամանակներու մէջ եւ ի մասնաւորի այս դժուակ օրերուն յոյսի եւ խաղաղութեան խարիսխ դարձած է մեր կեանքէն ներս: Մեր ուրախ թէ՛ դժուարին պահերուն մեր հայեացքը միշտ սեւեռած ենք մեր յուսատու Սօր՝ ակըն-կալելով, որ ան կրնայ քաջալերել մեզ եւ մեր հաւատքը ամրապնդել: Աւելի՛ն. Աստ-ւածամայրը ողորմութեամբ եւ գթութեամբ լցեցուն յոյսի աղբիւր է բոլոր անոնց, որոնք տկարացած են իրենց հաւատքին մէջ եւ զանազան դժուարութիւններու պատճառով յուսահատութեան եզրին կանգնած են: Ան այդ, Տիրամայրը ոչ միայն Քրիստոսի Մայրն է, այլեւ՝ ամբողջ մարդկութեան Մայրը եւ բոլորին համ-բերութեան, խոնարհութեան եւ անսահման սիրոյ կենդանի օրինակը:

Հետեւաբար Աստուածամօր Վերափոխման տօնը մեզի կը յիշեցնէ, թէ Ան չապրեցաւ սոսկ պատմութեան ժամանակահատուածի մը մէջ, այլ այսօր եւս կը շարունակէ ապրիլ ու հրաշագործել մեր կեանքին մէջ: Վերափոխուիլը մարմնա-յին ասիմաններու յաղթահարումն է՝ հոգեւոր վերանորոգումի եւ յաւիտենակա-կեանքի ժառանգութեան խորհուրդով զսպանկուած: Այս խորհուրդը միայն Սուրբ Կոյս Մարիամի անձին չի վերաբերիր, այլ՝ բոլոր անոնց, որոնք հաւատքով, յոյսով եւ սիրով լցեցուն աստուածահաճոյ կեանք մը կ'ապրին: Ուրեմն Տիրամօր հանդէպ մեր մօտեցումը սոսկ զգացական պէտք չ'է ըլլայ, այլ՝ հաւատքով ապրը-ւած, յոյսով լիցքաւորուած եւ վստահութեամբ խարսխուած յարաբերութիւն մը, որպէսզի իր օրինակին հետեւելով՝ վերափոխուիք եւ վերափոխենք նաեւ մեր շրջապատը:

Այսօր, երբ աշխարհը կրկին ալեկոծուած է աղօտութեան, խռովութեան եւ կորստեան փորթրիկներով, մենք մեր հայեացքը դարձեալ կը սեւեռենք Տիրամօր՝ որպէս յոյսի եւ հաւատքի վառ ու ապրող վկայութիւն եւ իւրաքանչիւր ճգնաժամի մէջ՝ յաւերժական յոյսի խարիսխ: Կառչելով Աստուածամայր-խարիսխին մեր քայլերը կը դառնան հաստատ, մեր կամքը՝ տոկոս, մեր նպատակները՝ անշեղ եւ մեր գոյութիւնը՝ իմաստալից: Երբ մեր հոգեւոր կեանքի ուղեկիցը դարձնենք Աս-տուածամայրը՝ կեանքի բոլոր հոսանքներուն ընդառաջ եւ վերիվայրումներուն ընթացքին, կրնանք ապահով ձեւով նաւարկել՝ քա՛ջ գիտնալով, որ յոյսի հաստա-տուն խարիսխ եւ փրկութեան օրինեալ տապանակ մեր Մայրը բոլոր ժամանակ-ներուն մեր կողքին է:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ...

Շարունակուած 5-րդ էջէն

Միացեալ Նահանգներու կառավարութեան ուղղակի օգնութիւն տրամադրելու Ազրպէյճանին: Այժմ Ազրպէյճանը կրնայ գնել միլիառաւոր տոլարներու արդիա-կան ամերիկեան զէնք, զոր կրնայ օգտագործել Յայաստանի դէմ: Անկիւս արդ-եօք ինչպէ՛ս կը նպաստէ խաղաղութեան:

Հանութեան որբէ՛մ մանրամասնութիւն չէ ներկայացուած Միացեալ Նահանգ-ներուն կողմէ ճամբու կառավարման վերաբերեալ: Ինչո՞ւ. անկիւս տրամադրուե-ցաւ 99 տարիով՝ յաւելեալ 99 տարի երկարաձգելու կարելիութեամբ՝ փաստօրէն զայն վերջնականապէս յանձնելով Միացեալ Նահանգներու կառավարութեան՝ Յայաստանի ինքնիշխանութեան հաշուոյն: Նաեւ պարզ չէ, թէ ի՞նչ օգուտ պիտի ստանայ Յայաստանը իր տարածքով միլիառաւոր տոլարներ արժողութեամբ ապրանքներու տարանցումէն:

Տարիներ շարունակ Փաշինեան դէմ էր Ալիեւի պահանջին՝ Յայաստանով անցնող ճամբու փոխարէն «միջանցք» ստեղծելու վերաբերեալ: Միջանցքը կ'են-թադրէ, որ տարանցիկ ուղին պիտի նկատուի ազրպէյճանական տարածք: Այնու-ամենայնիւ, երբ նախագահ Թրամփ ելոյթ ունեցաւ Սպիտակ տան վեհաժողովին, ան այդ ճամբան «միջանցք» կոչեց: Աւելի՛ն. երեք ղեկավարներուն կողմէ ստո-րագրուած համաձայնագիրին մէջ ներառուած է «անխղճընդոտ տարանցում» ինկորպարոյց եզրոյթը: Ի՞նչ կ'ենթադրէ «անխղճընդոտ» բառը: Արդեօք այդ կը նշանակէ, թէ Յայաստան իրաւունք չունի՝ ստուգելու Ազրպէյճանէն իր տարածքը անցնող անձերուն անձնագիրներն ու ուղեբեռը:

Ահա՛ Սպիտակ տան վեհաժողովի հիմնական արդիւնքը. Թրամփ կրնայ ստա-նալ իր հաղաղութեան Նոպէլեան մրցանակը, Ալիեւը, Էրտողանը եւ թրքական աշխարհը պիտի ապահովեն իրենց տարանցումը Յայաստանի տարածքով, մինչդեռ Յայաստան պիտի արտայանձնէ իր ինքնիշխան տարածքը եւ պիտի հե-ռացնէ Իրանը՝ իր միակ տարածաշրջանային դաշնակիցը:

ՕՐԱՏԵՏՐ

15 ՕԳՈՍՏՈՍ

- 1878 - Շուկոյ բանաստեղծ Սիւմանթոյի, Ակկի մէջ: 1915-ին զոհ գնաց Մեծ եղեռնին:
- 1904 - Շուկոյ դերասանուհի Վեներա Յովսէփեանի, Թիֆլիսի մէջ: Մահա-ցած է 1988-ին, Թիֆլիս:
- 1922 - Շուկոյ բանաստեղծ Վահագն Դաւթեանի, Արաքլիրի մէջ: Մահացած է 1996-ին, Երեւան:
- 1922 - Շուկոյ պատմաբան Աբել Սիմոնեանի, Սիւնիքի Խնձորեսկ գիւղը: Մահացած է 1994-ին, Երեւան:
- 1947 - Մահ հասարակական գործիչ, գրականագէտ եւ մանկավարժ Նիկոլ Աղբալեանի, Շիրոքայի մէջ: Մահ էր 1875-ին, Թիֆլիս:
- 1992 - Նահատակութիւն Արցախեան ազատամարտի մասնակից Բորիկ Ղազարեանի, Մարտունիի Կիլաչի ձոր շրջանին մէջ: Մահծ էր 1962-ին, Դուզէ Ճարտար:
- 1993 - Նահատակութիւն Արցախեան ազատամարտի մասնակից Ապրես Յովսէփեանի: Մահծ էր 1966-ին, Հաղորութի Ակնաղբիւր գիւղը:

Դ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ՄԽԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄՆ

ՎԱՂԸ՝ ՀՄԸՄ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ - ՌԱՌԻՏԱ ՏԸՔՈՒԱՆԷ

Վաղը, Պիստոնի «Ամին Ապտեյնուր» մարզադաշտին վրայ ՅՄԸՄ Պուրճ Համուտ ժամը 16:00-ին պիտի մրցի Ռաուտա Տըքուանէ խումբին դէմ:

Այս տարեշրջանին ՅՄԸՄ Պուրճ Համուտ 4 մըրցումներ խաղցած է անցեալ 31 մայիսէն ի վեր՝ յաղթելով 4 մրցումներուն ալ, նշանակելով 23 կոլ եւ ստանալով միայն 1 կոլ:

Պաշտպանողական գիծի մարզիկները լաւ ձեւով իրենց գործը կը կատարեն՝ իրենց ետին ալ բերդապահ Սոհամմետ Պաթրաշ:

Միջնապահ գիծը, գլխաւորութեամբ խմբապետ Աիկ Յարուիւնէանի եւ Յակոբ Նաճարեանի, գնդակը միշտ կը փորձէ մրցակիցէն խլել եւ դէպի յառաջ յարձակում կազմակերպել: Տիգօ, Սերժ եւ Եուսէֆ, ինչպէս նաեւ աջ ծայրի յառաջապահ Ֆատըլ արագ ձեւով հակադարձակում կը կազմակերպեն եւ կոլ կը նշանակեն:

Շատ անգամ ալ Բ. կիսախաղին Իպրահիմ Մուսաուի իր փորձառութեամբ շատ լաւ գիտնալով կոլ նշանակելու հմտութիւնը կը խաբէ մրցակից բերդապահները եւ կը գրաւէ մրցակիցի բերդը:

ՅՄԸՄ Պուրճ Համուտ ամբողջական խումբ ունի, բայց միշտ պէտք ալ ունի համակիրներու քաջալերանքին, որ աւելի եւս ոգեւորուած այս ամէնը իրականացնէ:

Այո՛, ՅՄԸՄ պէտք ունի բոլորին, որպէսզի արդիւնք տայ, յաղթէ եւ բարձրանայ Գ. դասակարգ:

Կան ֆութպոլի խումբեր, որոնք անհատներու պէտք ունին արդիւնք ձեռք բերելու, բայց ՅՄԸՄ Պուրճ Համուտ խմբային աշխատանքի պէտք ունի իր նպատակին հասնելու:

Ֆութպոլը 90 վայրկեան չէ միայն: Ամբողջ շաբաթ մը մարզիկները կը պատրաստուին, մարզիկներու խմբակը կ'ուսումնասիրէ մրցակիցը, կը դրուի խաղի «փլէն»-ը, որուն հիման վրայ խումբը դաշտին վրայ արդիւնք պիտի տայ: Մարզիկներ կ'ըլլան, որոնք ֆիզիքական լաւ պայմաններու մէջ չեն կրնար ըլլալ, այդ պատճառով ալ խումբին բժիշկը եւ մարծումի բժիշկը մարզիկներուն բոլոր ցաւերուն վրայ կ'աշխատին, եւ այն մարզիկը, որ ցաւ ունէր, հանգիստ մրցում կ'ունենայ մրցումին օրը:

ԵՐՈՂԱՅԻ ԳԵՐԱԾԱԿ

ՓԱՐԻՉ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ ՓԵՆԱԼԹԻՆԵՐՈՎ ՅԱՂԹԵՑ



«Զեմփիլնը լիկ»-ի պիտոյեան Փարիզ Սեն Տերմեն ձախող ելոյթ կ'ունենար Իտալիոյ մէջ, Եւրոպայի գերբաժակի մրցումին՝ Թորենտիսի դէմ, որ շատ աւելի լաւ կը խաղար:

Միջի Վան Տը Վեն եւ խմբապետ Զորիսթիան Ռոմեո կոլեր ալ նշանակեցին 39-րդ եւ 48-րդ վայրկեաններուն:

Փարիզ Սեն Տերմեն դէպի պարտութիւն կ'ուղղւէր, երբ քորեացի Բանկ-Ին Լի կրցաւ կոլ նշանակել 85-րդ վայրկեանին, Կոնսալո Ռամոն 94-րդ վայրկեանին կրցաւ նշանակել հաւասարութեան կոլը՝



Ֆութպոլը այդ չէ միայն, որ կը տեսնենք դաշտին վրայ: Ամբողջ ամիսներու երկար պատրաստութիւնները, վարչականներու եւ պատասխանատուներու զոհողութիւնները իրենց արդիւնքը կու տան դաշտին վրայ:

Երբեմն պզտիկ սխալ մը կրնայ ամէն ինչ փոխել եւ արդիւնքը կրնայ ժխտական ըլլալ: Բայց մեր մարզիկները, ինչպէս միշտ, իրենց 100 տոկոսէն աւելին պիտի տան, որպէսզի համակիրներուն նուիրեն յաղթանակ՝ հասնելու նպատակին, որ Գ. դասակարգ բարձրանալն է:

Վաղը ուրեմն բոլորս դաշտ՝ քաջալերելու տղաքը, որոնք 90 վայրկեան ետք վստահ յաղթանակով մը կրնան ուրախացնել ՅՄԸՄ-ի ընտանիքը:

Համակիրներէն կը սպասուի մեծ թիւերով դաշտ ներկայանալ եւ քաջալերել 90 վայրկեան, մանաւանդ որ մասնաւոր փոխադրակառքեր ալ տրամադրած են զանոնք դաշտ փոխադրելու, Ֆանարէն, Ռաուտայէն եւ Պուրճ Համուտէն:

ԵՐՈՂԱԿԱՆ ՖՈՒԹՈՂ

ԱՅՍՕՐ՝ ԼԻՎԵՐՓՈՒԼ - ՊՈՐՆՄԱՌԻԹ ՎԱՂԸ՝ ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻՒՆ - ՇԹՈՒԹԿԱՐԹ

Այս շաբաթավերջին Եւրոպայի մէջ կը սկսի 2025-2026 եղանակը, այս ծիրին մէջ տեղի կ'ունենան Անգլիոյ «Փրեմիեր լիկ»-ի առաջին հանգրուանի մրցումները, Ֆրանսայի մէջ ալ կը սկսին «Լիկ 1»-ի մրցումները, Սպանիոյ «Լա լիկա»-ի մրցումներուն նման, մինչ Իտալիոյ մէջ տեղի կ'ունենան բաժակի մրցաշարքի առաջին հանգրուանի մրցումները: Գերմանիոյ մէջ ալ բաժակի մրցումներ ալ տեղի կ'ունենան, մինչ Պայերն Միւնիխ եւ Շթութկարթ իրար կը հանդիպին Գերմանիոյ գերբաժակի մրցումին:

Անցեալ տարուան «Փրեմիեր լիկ»-ի պիտոյեան Լիվըրպոլ, որ հաւասարեցաւ Մանչեսթըր Եունայթըտի 20 տիտղոսներուն, այս տարեշրջանին ալ թեկ-

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ
Լիծ - Էվըրթըն 22:00

ԳԵՐՄԱՆԻԱ

Վաղը Գերմանիոյ գերբաժակի մըրցումին, որ այսուհետեւ պիտի կոչուի «Պեքլնպաուըր բաժակ»-ի մրցում, բաժակակիր Շթութկարթ պիտի մրցի պիտոյեան Պայերն Միւնիխի դէմ, Շթութկարթի «Էմ. Էյ. Փի. Արնեա»-ի վրայ:

2011-էն ի վեր առաջին անգամ ըլլալով բացակայելէ ետք անցեալ եղանակին, Պայերն Միւնիխ կը վերադառնայ գերբաժակի մրցումին, խումբի մը դէմ, որ յաջորդական երկրորդ տարին ըլլալով կը մասնակցի այս մրցումին, յոյսով, որ այս անգամ աւելի բախտաւոր ըլլայ, քան անցեալ տարուան փենալթիներով պարտութիւնը՝ Պայերն Լեւերքուզընի դէմ:

Շթութկարթ իր անցեալ տարուան խումբէն միայն կորսնցուցած է Էն-ցո Միյոն, եւ մարզիչ Սեպպիսթիան Յեօնէս պիտի փորձէ լաւ սկսիլ տարեշրջանը առաջին գերբաժակի տիտղոսով 1992-էն ի վեր առաջին անգամ ըլլալով:

Պայերն Միւնիխ հանգիստի առիթ չունէր այս ամառ, ուր մասնակցած էր ակումբներու մոնտիալին եւ հասած քառորդ աւարտական: Խումբին միացաւ քոլումպիացի Լուիս Տիաս (Լիվըրպոլէն), եւ մարզիչ Վեֆսաւ Քոմփանի յոյս ունի, որ Տիասի հետ Պայերն աւե-



նածուններուն կարգին է, մանաւանդ որ 250 միլիոն սթերլինկ փաուստ ալ ծախսեց ակումբը աւելի եւս զօրացնելու նպատակով՝ ձեռք ձգելով Գերմանիոյ լաւագոյն ֆութպոլիստ Ֆլորիան Վիրցը, Միլոշ Զեքեզը, Ճերեմի Ֆրիմփոնկը, ինչպէս նաեւ Ուկո Էքիթիքէն: Ֆրիմփոնկ եւ Էքիթիքէ անցեալ շաբաթ «Զոմի-նիթի Շիլտ»-ի (գերբաժակ) մրցումին կոլեր նշանակած էին, բայց բաժակակիր Զորիսթը Փեյես փենալթիներով յաղթական դուրս եկած էր:

Պորնմաութ քանի մը փայլուն աստղեր կորսնցուց այս ամիս, որոնց կարգին Զեքեզ, որ Լիվըրպոլին միացաւ, Տիս Դոյ-սըն (Ռեյա Մատրիտ) եւ Իլիա Չապարնի (Փարիզ Սեն Տերմեն), եւ այսօր գիշեր տըր դէմքերով պիտի ներկայանայ «Էնֆիլտ»՝ Լիվըրպոլի դաշտը:

Բերդապահ Տորստ Բերթովիչ եւ յետապահ Ատրիեն Թրիֆեր միացան Պորնմաութին, բայց խումբը կը վստահի իր նախկին 7 տարեշրջաններու բացման մրցումի յաջողութիւններուն, ուր 3 յաղթանակ եւ 4 հաւասարութիւններ արձանագրած է: Աւելի ինքնավըստահ զգալու պատճառ մըն ալ, անցեալ եղանակին 9-րդ դիրքի վրայ աւարտելը «Փրեմիեր լիկ»-ի իր լաւագոյն արդիւնքն էր:

Լիվըրպոլ կը վերջին 13 ճակատումներուն 12 յաղթանակ արձանագրած է Պորնմաութի վրայ: Վերջին 6 ճակատումներուն «Էնֆիլտ»-ի մէջ Լիվըրպոլ միշտ ալ յաղթած է:

Լիվըրպոլէն պիտի բացակային Ճո Կոմես (Լիւրաուր) եւ Ռայլըն Կրաւենպերիս, որ անցեալ տարուան վերջին հանգրուանին կարմիր քարտ ստացած էր:

Պորնմաութէն պիտի բացակային Լուիս Զուք եւ յառաջապահ Էնէս Ունալ որոնք վիրաւոր են:

Վաղը կը շարունակուին առաջին հանգրուանի մնացեալ մրցումները, ուր Մանչեսթըր Սիթի պիտի ըլլայ հիւրը Վուլվըլ, իսկ Լիւրալի օր հանգրուանի «սպասուած մրցում»-ը՝ Մանչեսթըր Եունայթըտի եւ Արսենալի միջեւ:

Ստորեւ յայտագիրը.

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Լիվըրպոլ - Պորնմաութ	22:00

ՎԱՂԸ	
Ասթոն Վիլա - Նիւքասլ	14:30
Պրայըն - Ֆուլհամ	17:00
Սանտըրլէնտ - Ուեսթ Համ	17:00
Թորենտ - Պըրլի	17:00
Վուլվըլ - Մանչեսթըր Սիթի	19:30

ԿԻՐԱԿԻ ՕՐ	
Նոթինգհամ Ֆորեսթ - Պրեմֆորտ	16:00
Չելսի - Զորիսթը Փեյես	16:00
Մանչեսթըր Եունայթըտ - Արսենալ	18:30

ՃԱՏՐԱԿ

ԱՐՈՆԵԱՆ ԿԸ ՄՆԱՅ Բ. ԴԻՐՔԻ ՎՐԱՅ

Մէյնթ Լուիսի մէջ (Միացեալ Նահանգներ) կը շարունակուի արագ եւ կայծակնային ճատրակի մրցաշարքը, որուն մասնակից հայ վարպետ Լեւոն Արոնեան կը շարունակէ իր յաջող ընթացքը:

Առաջին երկու օրերու 6 հանգրուաններէն ետք տեղի ունեցան երրորդ օրուան յաջորդ 3 հանգրուանները, որոնք արագ ճատրակի վերջին 3-ն էին:

Արոնեան 1-0 արդիւնքով յաղթեց Սամ Շենքլենտի, երկրորդ մրցումին (8-րդ հանգրուան) պարտութեան մատնեց Կրեկորի Օփարիւնը, իսկ 9-րդ եւ վերջին ճակատումին հաւասարութիւն արձանագրեց փիթնամքի Լիւմ Լէի հետ:

Արագ ճատրակի մրցումներու աւարտին եւ կայծակնային մրցումներէն առաջ կը ներկայացնենք ընդիմաւոր դասաւորումը, ուր Բ. դիրքի վրայ մնաց հայ վարպետ Լեւոն Արոնեան:

	ՎԵՏ
1.- Ֆապիանօ Զարուանա	14
2.- Լեւոն Արոնեան	13
3.- Մաքսիմ Վաշիէ-Լակրաւ	11



4.- Կուքշէ Տոմարաճու (Տիօ)	10
5.- Լէյնիէ Տոմիկէտ	9
6.- Ուեզլի Սօ	9
7.- Նոտիրպէր Ապտուսաթարով	9
8.- Լիւմ Լէ	7
9.- Սամ Շենքլենտ	5
10.- Կրեկորի Օփարիս	3

լի եւս կը գօրանայ՝ պահելով օտար դաշտի վրայ իր անյաղթ մնալու կարողութիւնը անցեալ 2024-ի դեկտեմբերէն (6 յաղթանակ եւ 3 հաւասարութիւն) ի վեր, եւ գերբաժակը պահելով



2022-էն ի վեր առաջին անգամ ըլլալով. գերբաժակը իբրեւ յարգանք կոչուած էր իր պատմական մարզիկ Ֆրանց Պեքլնպաուըրի անունով:

Պայերն Միւնիխ, որ իր պատմութեան ընթացքին ամենէն շատ Շթութկարթի դէմ մրցած է (162 անգամ)՝ յաղթելով 95 անգամ (հաւասարելով 29 անգամ եւ պարտուելով 38 անգամ): Շթութկարթ իր վերջին 20 մրցումներուն բնաւ հաւասարութիւն չէ արձանագրած՝ յաղթելով եւ պարտուելով 10 մրցումներ: Պայերն Միւնիխ երեքէ աւելի կոլեր նշանակած է անցեալ տարեշրջանի իր վերջին 6 մրցումներէն 5-ին, օտար դաշտի վրայ:

Նիք Վլոյքեմատէ, որ Պայերն Միւնիխի փոխանցուելու առիթ ունէր, մնաց Շթութկարթ, եւ վաղը պիտի փորձէ իր խումբը առաջնորդել անակնկալ արդիւնքի մը: Պայերն Միւնիխի կողմէ Մայքըլ Օլիւսէ շատ լաւ վիճակի մէջ կը գտնուի՝ Պայերն վերջին 4 մրցումներուն կոլեր եւ ելիւթներ կատարելով:

Շթութկարթէն պիտի բացակայի Պայերնի նախկին պատասխներէն Անկէօ Շիլըր, որ վիրաւոր է, մինչ Պայերնէն պիտի բացակային Ժամալ Մուսիլա եւ Ալֆոնսօ Տելլիս, որոնք տարեշրջանի 2-րդ մասին հաւանաբար վերադառնան:

ՖՐԱՆՍԱ

Այսօր կը սկսի «Լիկ 1»-ի պիտոյեանութիւնը, ուր Ռենն պիտի հիւրընկալէ Մարսելը:

Անցեալ տարի Ռենն 12-րդ դիրքը գրաւեց, վերջին 10 տարիներուն առաջին 6 դիրքերուն մէջ գտնուելէ ետք, եւ այս տարեշրջանին պիտի փորձէ վերըստին «Եւրոպական բաժակ»-ի դիրքեր գրաւել: Մարսել անցեալ եղանակին 2-րդ դիրքը գրաւեց պիտոյեան Փարիզ Սեն Տերմենի ետին, եւ մարզիչ Ռոպերթօ Տը Ցերպի պիտի փորձէ պիտոյեան դառնալ 2009-2010 տարեշրջանէն ետք առաջին անգամ ըլլալով:

Ակումբը առիթ տուաւ այդ երազը իրականացնելու՝ ձեռք ձգելով Իկոր Փայիտան եւ Փիեռ-Էմիլիք Օպամէ-յանկը:

ՆԵԹԱՆԻԱՀՈՒ. «ԿԱԶԱՆ ԿՐԱՆՔ ՌՄԲԱԿՈՇԷԼ ԴԻՇԴ ԻՆՉՊԷՍ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Բ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՅՔԻՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՏՐԵՍԱԸՆ ՔԱՂԱՔԸ ՌՄԲԱԿՈՇԵՅԻՆ»

Իսրայելի վարչապետ Պենիամին Նեթանիահու ամերիկեան «Մաքս Նիուզ» պատկերասփիռի կայանին հետ զրոյցի ընթացքին յայտնեց. «Իրանի մէջ վարչակարգի փոփոխութիւնը պատերազմի նպատակներէն մէկը չէր, սակայն կրնայ անոր արդիւնքներէն մէկը ըլլալ»:



«7 հոկտեմբեր 2023-ին յստակ բացթողումներ եւ հետախուզական ու այլ սխալներ գործուեցան», նշեց ան՝ ակնարկելով Կազայի մէջ «Աքսայի ջրհեղեղ» գործողութեան մեկնարկին:

«Կազան կրնանք ոմբակոծել ճիշդ ինչպէս դաշնակիցները Յամաշխարային Բ. պատերազմի ընթացքին Գերմանիոյ մէջ Տրեստըն բաղաքը ոմբակոծեցին», նշեց Իսրայելի վարչապետը:

ՆԵԹԱՆԻԱՀՈՒ ԿԸ ՇՆՈՐՀԱԻՐԷ ԹՐԱՄՓԸ, ՓԱՇԻՆԵԱՆՆ ՌԻ ԱԼԻԵԻԸ

Իսրայելի վարչապետ Պենիամին Նեթանիահու ողջունած եւ շնորհաւորած է Միացեալ Նահանգներու նախագահի Տանըլտ Թրամփը, Յայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ Ուաշինկթընի մէջ հռչակագիրի ստորագրման առիթով:

«Կը շնորհաւորեմ նախագահ Թրամփը: Ձեր համարձակ առաջնորդութիւնը եւ համաշխարհային տեսլականը կարելի դարձուցին յաւելեալ խաղաղութեան համաձայնագիր մը:

«Կը շնորհաւորեմ նաեւ նախագահ Ալիեւը, վարչապետ Փաշինեանը եւ Ազրպէյճանի ու Յայաստանի ժողովուրդները այս պատմական համաձայնագիրի ստորագրման առիթով», «Էքս»-ի իր էջին վրայ գրած է Նեթանիահու՝ մաղթելով հաշտեցման եւ միացեալ բարգաւաճման նոր դարաշրջան:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Այս գործելաճոցը յատկապէս ակնյայտ էր մայրաքաղաքէն դուրս: 13 նոյեմբերին խոշտանգումներու, անմարդկային վերաբերմունքի կամ պատիժի կանխարգիլման եւրոպական կոմիտէն (Սի.Փի.Թի.) իրապարակեց գէկուցում սեպտեմբեր 2023-ին երկիր կատարած իր այցելութեան վերաբերեալ: Այնտեղ «Սի.Փի.Թի.»-ն նշած է իրաւական երաշխիքներու բարելաւումները: Մասնաւորաբար, «Սի.Փի.Թի.»-ն նշած է, որ ոստիկանութեան հետ «ոչ պաշտօնական զրոյցներու» նախկին գործելաճոցը գործնականին մէջ վերցուած է, հակառակ այն իրողութեան, որ ոստիկանութեան աշխատակիցները երբեմն տակաւին կալանաւորուածները ենթադրեալ քրեական յանցագործութեան առնչուող հիմնական փաստական տարրերու վերաբերեալ կը հարցաքննէին՝ առանց պաշտպանի ներկայութեան», նշուած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան գեկուցումին մէջ:

ՄԻՆԻՈՐԱՎ «ԿՈՒՁՆՔ, ՈՐ ԻՐԱՆ...»

Շարունակուած 2-րդ էջէն

Ան խոր գնահատում յայտնեց «անցեալ շաբաթ լիբանանեան կառավարութեան որդեգրած կարելոր ու քաջարի որոշումներուն, ինչպէս նաեւ երեկ Ալի Լարիժանիի այցելութեան ընթացքին հանրապետութեան նախագահին ու վարչապետին արտայայտած կեցուածքներուն, եւ ասիկա իրապէս Լիբանանի որդեգրած կարելոր բաներէն է, եւ որ պէտք է շարունակ պնդել զենքը լիբանանեան պետութեան եւ բանակէն ու ներքին ապահովութեան ուժերէն բաղկացած անոր օրինական ուժերուն մենաշնորհը դարձնելու կարելորութեան վրայ, որովհետեւ ատիկա միակ ձեւն է, որ պետութիւնը կրնայ իր ամբողջական իշխանութեան եւ իր բոլոր հարցերուն մէջ ազատ որոշումին վերատիրանալ»:

«Օրերը փաստեցին, թէ ոչ ոք լիբանանցիներէն որեւէ խումբ կը պաշտպանէ բացի լիբանանեան պետութենէն, եւ որեւէ արտաքին կողմէ, ասկէ կամ անկէ իսկական պաշտպանութիւն չկայ. լիբանանեան պետութիւնը մեր միակ յոյսն է», շեշտեց Սիւնիորա:

ԿՈՒՁՈՒԻ

Հաստատութիւն մը՝ Տորայի շրջանին մէջ, անմիջական կարիքը ունի հաշուապահի մը, աշխատանքի լիաժամ կամ կիսաժամ դրութեամբ, ըստ յարմարութեան: Դիմել՝ հեռ. 03-164767:

ԾԱԽՈՒ ՀՈՂ

Այնճարի մէջ, պարտեզի երկու սկիզբը: Դիմել՝ հեռ. 70-275110 կամ 03-320810:

ՄԱՀԵՐ. «ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԱՄԱՐ ԱՆՉՆԱՍՊԱՐԱԿԱՆ ՀԱՐՑ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ»

Իսրայելի արտաքին գործոց նախարար Կիտեռն Սահեր «Նիուզ Մաքս» պատկերասփիռի կայանին հետ զրոյցի ընթացքին նշեց. «Պաղեստինեան պետութեան ճանաչումը Իսրայելը կը դարձնէ այնպիսի սահմաններով, որոնք կարելի չէ պաշտպանել»:

Նշեց, որ շարք մը երկիրներ կը պատրաստուին սեպտեմբերին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ընթացքին ճանչնալու Պաղեստինի պետութիւնը:

«Պաղեստինեան պետութեան ստեղծումը Իսրայելի համար անձնասպանական հարց պիտի ըլլայ», նշեց



Սահեր:

Իսրայելեան դիւանագիտութեան պետը նաեւ յայտնեց. «Ինծի համար երկու պետութիւններու լուծումը երկու պետութիւններու պատրանքն է»:

ԱՅՍՕՐ ԱԼԱՍՔԱՅԻ ՄԷՋ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Ալաքայի մէջ բանակցութիւնները կրնան ռազմավարական եւ յարձակողական գէնքերու վերահսկման հարցին շուրջ համաձայնութիւններուն ելք մը ապահովել», յայտնեց Փութին՝ աւելցնելով. «Չենք բացառեր, որ Ուաշինկթընի հետ հաղորդակցութիւններու յաջորդ փուլը ՍԹԱՐԸ համաձայնագիրին վերաբերեալ համաձայնութեան գոյացման համար ըլլայ»:

Թրամփ-Փութին հանդիպումը պիտի սկսի Պէյրութի ժամանակացոյցով գիշերուան ժամը 10:30-ին՝ թարգմանիչներու ներկայութեամբ դէմ առ դէմ զրոյցով:

Ռուսիոյ նախագահի օգնական Եուրի Ուշաքով կը յայտնէ, որ վեհաժողովի կեդրոնական նիւթը պիտի ըլլայ ուլքրանական ճգնաժամի կարգաւորումը, սակայն այլ նիւթեր եւս պիտի արծարծուին:

Ան աւելցուց, որ բանակցութիւնները տեղի պիտի ունենան «5-ը 5-ի դիմաց» ձեւաչափով: Փութինի կողքին ռուսական պատուիրակութեան կազմին մէջ պիտի ըլլան արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով, Եուրի Ուշաքով, պաշտպանութեան նախարար Անտրէյ Պելտինսկի, Ելեմուտցիի նախարար Անթոն Սիլուանով եւ Ռուսիոյ ուղղակի ներդրումներու հիմնադրամի ղեկավար Քիրիլ Տիմիրիտ:

Սպիտակ տունը յայտարարեց, որ Թրամփ ունի Ուքրանիոյ մէջ պատերազմը աւարտելու շարք մը ընտրանքներ, ներառեալ պատժամիջոցները, սակայն նշեց, որ Թրամփ կ'ուզէ Ուքրանիոյ պատերազմին վերջ տալ դիւա-

նագիտութեան ճամբով:

Սպիտակ տունը նշեց, որ ժողովէն ետք մամլոյ ասուլիս տեղի պիտի ունենայ:

Ամերիկեան «Սի.Պի.Ես.» պատկերասփիռի կայանը, յղում կատարելով իր աղբիւրներուն, հաղորդեց, որ Միացեալ Նահանգներ յաջորդ շաբթուան վերջին Թրամփի, Փութինի եւ Չեյնսքիի միջեւ եռակողմ հանդիպումի համար յարմար վայր կը փնտռեն:

Ամերիկեան «Էն.Պի.Սի.» եւ «Սի.Էն.Էս.» պատկերասփիռի կայանները, յղում կատարելով իրենց աղբիւրներուն, հաղորդեցին, որ Թրամփ Չեյնսքիին խոստացած է Փութինի հետ հանդիպումի ժամանակ տարածքային հարցեր չընկարկել:

Թրամփ այս յայտարարութիւնը կատարած է Եւրոպացի ղեկավարներու հետ առցանց ժողովի ժամանակ: Վերոնշեալ աղբիւրներուն համաձայն, Միացեալ Նահանգներու նախագահը մտադիր է անվերապահ զինադադարի հասնիլ:

Բացի ատկէ, որոշ եւրոպացի ղեկավարներ այն տպաւորութիւնը ստացած են, որ Թրամփը «չափազանց լաւատես չէր Փութինի հետ հանդիպումի արդիւնքին վերաբերեալ»:

Թրամփ նախապէս յայտարարած էր, որ Ուքրանիոյ վերաբերեալ խաղաղութեան համաձայնագիրը պիտի ներառէ «տարածքներու որոշակի փոխանակում», եւ Չեյնսքի «պետք է պատրաստ ըլլայ բան մը ստորագրելու»:

ՍՈՒՐԻԱՆ ԿՈՂՁՈՒՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՊԷՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻ ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Սուրիան կ'ողջունէ 8 օգոստոսին Յայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ պատմական խաղաղութեան համաձայնագրի նախաստորագրումը, որ տեղի ունեցած է Միացեալ Նահանգներու դրոստելի ջանքերուն շնորհիւ: Այս մասին յայտարարած է Սուրիոյ արտաքին գործոց նախարարութիւնը:



«Սուրիոյ Արաբական Հանրապետութիւնը, դիտարկելով այս համաձայնութիւնը իբրեւ կարելոր քայլ, որ պիտի նպաստէ Հարաւային Կովկասի մէջ անվտանգութեան ու խաղաղութեան հաստատման եւ պիտի ամրապնդէ տագնապները խաղաղ ճամբով լուծելու սկզբունքը, կը շնորհաւորէ համաձայնագիրի երկու կողմերը՝ իրենց տարակարծութիւնները մէկ կողմ դնելու եւ խաղաղութեան հասնելու համար, որ դրական ազդեցութիւն պիտի ունենայ երկու երկիրներու ժողովուրդներուն, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազգային կայունութեան համար», նշուած է յայտարարութեան մէջ:

«ՌՈՒՄԻԱՆ ՌԻՔՐԱՆԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԷՋ ՅԱՂԹԵՅ»

Կ'ԸՍԷ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Հունգարիոյ վարչապետ Վիթթօ Օրպան յայտարարեց, որ Ռուսիան Ուքրանիոյ պատերազմին մէջ յաղթեց: Ան այս մասին յայտարարեց ուրբաթ օր Ալաքայի մէջ Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ նախագահներ Տանըլտ Թրամփի եւ Վլատիմիր Փութինի միջեւ վեհաժողովէն առաջ:

Օրպան հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց. «Այժմ կը խօսիմք այնպէս, թէ պատերազմը բաց վիճակի մէջ է, սակայն այդպէս չէ: Ուքրանացիները պատերազմը կորսնցուցին, եւ այս պատերազմին մէջ Ռուսիան յաղթեց»:

«Միակ հարցումը այն է, որ ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու տակ ուքրանացիներուն աջակցող Արեւմուտքը պիտի ընդունի, թէ ատիկա տեղի ունեցաւ, եւ այս բոլորէն բխող հետեւանքները ի՞նչ են», աւելցուց ան: Հունգարիոյ վարչապետը նշեց, որ Եւրոպան Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Ժո Պայտլընի նստաշրջանին կորսնցուց Փութինի հետ բանակցելու առիթը, եւ ան այժմ կը դիմադրուէ առանց իր մասնակցութեան իր ապագայի ճշման վտանգը: «Եթէ բանակցութիւններուն չես մասնակցիր, ապա ճաշացուցակին վրայ ես», աւելցուց Օրպան: Ան նշեց, որ Եւրոպական Միութեան Ուքրանիոյ վերաբերեալ միացեալ յայտարարութեան մասնակի կերպով ընդդիմացած է, որովհետեւ Եւրոպան իբրեւ «անհեթեթ ու ողորմելի» կը ներկայացնէր:

ԱՅՍՕՐ՝ ԼԻՎԵՐՓՈՒԼ ...

Շարունակուած 7-րդ էջէն

Ռենսի լաւագոյն մարզիկներէն է Աննօ Զալիմուենտ, որ վերջին մրցումներուն միշտ ալ կարելոր կոլեր նշանակած է, մինչ Մարսելի յառաջապահ Սեյսըն Կրիսպուտ, որ անցեալ տարի կոլ սքորըրներու պարագլուխի դիրքը գրաւեց միասնաբար Ռամսն Տեմպելի հետ (21 կոլ), միշտ ալ Ռենսի դէմ փայլած է: Ռենսն կրնայ բացակայիլ Լիվիան Պրասիէ, մինչ պարագան Նոյնս Է Փայիստիոյ համար, որ վերջին պատրաստութիւններուն բացակայ էր վիրաւոր ըլլալուն պատճառով:

Ստորեւ կը ներկայացնենք «Լիկ 1»-ի առաջին հանգրուանի յայտագիրը.	
ԱՅՍՕՐ	ԺՄՍ
Ռենս - Մարսել	21:45
ՎԱՂԸ	
Լանս - Լիոն	18:00
Մոնաքօ - Լըհաւր	20:00
Նիս - Թուլուզ	22:05
ԿԻՐԱԿԻ	
Պրետօ - Լիլ	16:00
Անժէ - Փարիզ Ֆ. Բ.	18:15
Մեծ - Սթրազպուրկ	18:15
Օքսեռ - Լորիան	18:15
Նանթ - Փարիզ Սեն Ժերմեն	21:45

ՍՊԱՆԻԱ	
«Լա լիկա»-ի առաջին հանգրուանին տեղի պիտի ունենան հետեւեալ մրցումները.	
ԱՅՍՕՐ	ԺՄՍ
Ժիրոսա - Ռայօ Վայքանսօ	20:00
Կիարեալ - Ռեալ Օվիտո	22:30
ՎԱՂԸ	
Մայորքա - Պարսելոնա	20:30
Ալաւես - Լըվանթ	22:30
Վալենսիա - Ռեալ Սոսիտատ	22:30
ԿԻՐԱԿԻ ՕՐ	
Սելթա Վիկօ - Խեթաֆէ	18:00
Աթլետիք Պիլաո - Սելիլիա	20:30
Եսպանիոլ - Աթլ. Մատրիտ	22:30
ԵՐԱՌԵԱՐԹԻ	
Էլչէ - Պելթիս	22:00
ԵՐԵՐԵԱՐԹԻ	
Ռեալ Մատրիտ - Օսասունա	22:00